

HAMALSARAN : Revue Arménienne, SCIENTIFIQUE ET LITTÉRAIRE
Directeurs : MISSAK BAGHDASSARIAN & HOVHANNÈS CHAVARCH

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

[UNIVERSITÉ]

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Բնութիւնը միշտ փակուող
Գիտութիւնը մերստիւնող .
Այս մերցիկնիկն դիմելոյն է,
Առաջիկնիկն սիրելոյն հաւեար .

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1900 — ՅՈՒԼԻՍ ԵՒ ՕԳՈՍՏՈՍ — ԹԻՒ 7-8

ՏՆՕՐԻՆ - ԽՄՐԱԳԻՐՆԵՐ

ՄԻՍԱՔ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ - ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԱՒԱՐԵ

ՓԱՐԻՉ

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ՏՊՕՐԱՆ

Ուշադրութիւն մեր ՆՈՐ ՀԱՍՏԵՐԻՆ .

Rédaction de la Revue « HAMALSARAN »

4, rue Ortolan, 4 — PARIS

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Վարդապետ Մարտիրոսիկեր (Ն. Թէլալա)	305
Գանի մը հորհրդածութիւններ (Մոգ-Պետ)	315
Ձեռաշրջում (Միսաք Պաղտասարեան)	317
Թելադրելիութեան Վարդապետարիկեր — Գիտական — (Հ. Պէրնհայմ)	325
Ճրտեսայի Վարձապետները (Ուսանող)	330
Կերպարն Հանդիս — Հոգեբանական — (Յուզ. Շալարշ)	341
Վերջարյն — Բանաստեղծ. — (Գ. Յ. Կարբինկան)	349
Սիրիկե Ազդեցութիւնը Չգացումներու Արտաբնութեան վրայ — Գիտական Ընթերցումը — (Քլաւ Պէրնար)	350
Ստրելիքայ Աշխարհը — Արուեստանդէսէն Եթեր — (Գ. Մկրտիչեան)	359
Գրեյու Արուեստը — Քննախօսական — (Մոգ-Պետ)	367
Գիտական Արտնիկ	
— Աերկերու ստեղծութեան զիտարութիւնը եւ Միջասներու ազանները (Գ. Մեծատուրեան)	373
— Դիմադրութեան զարգացումը եւ Թելադրելիութիւն (Նշան)	375
— Կոթիւնի եւ Ձեռքարարութիւն (Նշան)	377
— Հիւսիսային Բուսական ժառանգը (Գ. Մ.)	378
Ստացումս Գրեյու «Համալսարան»ի Մատենադարանը	379
Կովկասի Հայոց Թեմական Հոգեւոր Ինքնակազմները — Գրախօսական-Կրթական — (Մ. Պ.)	380

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Համալսարանի»ի 7-8 թիւերը այս անգամ եւս միացած կը հրատարակենք:

«Համալսարան»ի յապաղումները որ եւ է կերպով չեն լիակարգ բաժանորդագրութեան. որովհետեւ, ինչպէս ժամանակին ծանուցած ենք արդէն, բաժանորդագրութիւնը թիւի վրայ ըլլալով, տարեկան բաժանորդները 12 թիւ եւ վեցամսեայ բաժանորդները 6 թիւ պիտի ստանան միշտ: Վեցամսեայ բաժանորդներէն կը խնդրենք որ այս զոյգ թիւերը ստանալուն, բարեհաճ ինկրորդ վեցամսեայ բաժանորդին ինչ անմիջապէս մեզ շնորհել:

Կը հրաւիրենք նաեւ արտերկան այն բաժանորդները, որ տակաւին իրենց հաշիւը մաքրած չեն, փութան պարտքերն ին կատարել: Թերթի մը յաջողութիւնը եւ հեռագիտէն իր ուղղութեան մէջ ճշմարիտ բարձրութեան մը հասնելը, իր բաժանորդներու ընծայած քաջակերութեան մէջ փնտռելու է:



ՎԱՂՈՒԱՆ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ^(*)

Բ

Մարգիւթիտան զէպի առաջ երթալու շարժումը յապա-
ղող ոյժերը կամ բացասական ներգործութիւն կամ չփողա-
կան գիմպրութեան բնոյթ ունին : Այս բանը մասամբ ա-
պացուցինք : Սակայն տարբերութիւնը լաւ կերպով հաս-
տատելու համար, չփողական ոյժ պիտի անուանենք, օրի-
կի համար, տգիտութիւնը, ապուշութիւնը եւ տմարդու-
թիւնը, այսինքն ուղղիչ ձգտումէ զրկուած գիմպրութիւն-
ները : Միւս կողմէ տեւրական, յիմարական անձնասպա-
նութեան հակում ունեցող, կրօնական մոլեռանդութեան
եւ ուրիշ նման գործօնութիւններ բացասական յատկանիչ
ունեցող ոյժեր են որ կը տանին որոշ ուղղութիւններով :
Այս յապաղիչ եւ ալլաղան ոյժերը չէզոքացնելու համար
պէտք է գործածել արմատապէս տարբեր մեթոսներ : ու
սեանուի, օրինակ, թէ ինչ կրնայ ընել մոլեռանդ մը, ու
կարելի է ձեռք առնել նախազգուշական միջոցներ՝ զայն
լուսաւորելու, համոզելու, ու որչափ որ կարելի է, առաջ-
նորդելու եւ իր ախար առաքինութեան փոխելու համար .
բայց ոչ ոք գիտէ եւ կարող է գիտնալ թէ ինչ կրնայ ընել

(*) Տես Հանաքարան, էջ 259 :— Շար. եւ վերջ :

կոչտ մը կամ տմարգի մը, որոնց հետ գործելու է իբր անբան կոչտի մը, անմիտի մը հետ: Բացասական ոյժ մը միշտ իր մէջ որ եւ իցէ յատկութիւն կը պարունակէ, երբեմն նոյնիսկ խիստ բարձր, թէեւ գէշ կերպով ուղղուած, ուրկէ կարելի է օգտուիլ. բայց առանց ուղղութեան ոյժ մը, որ միմայն յապաղիչ չփում մը ունի, կ'արտադրէ միշտ անգարմանելի կորուստ մը: Ուրեմն մեզ տրուած հարցին առաջին պատասխանն է՝ տալ բացասական ոյժին լաւագոյն ուղղութիւնը եւ ոչնչացնել ամեն չփողական ոյժ:

Անվիճելի է որ չփողական գիմադրութիւններու՝ մարդկութեան շարժման վրայ ամենէն աւելի յապաղիչ հետեւանք թողոզը ագիտութիւնն է: Առանց պատճառի չէ որ իմաստութեան մարգը, Պուտտա, ըսած է. «Տգիտութիւնը աշխարհի ամենէն մեծ պատուհասն է»: Այն չփումը որ կը ծագի տգիտութենէն, եւ որ մեծապէս խոշորցած է լեզուներու եւ ազգութիւններու թիւով, կրնար սկարանալ միայն ծանօթութիւններու ձուլումով եւ մարդկութեան տարասեռ տարբերութեան միացումով: Բայց թէեւ ագիտութիւնը մարդկութեան առաջադիմական շարժումը յապաղած լինի անցեալին մէջ, ճշմարիտ է որ այսօր բացասական ոյժերը աւելի մեծ կարեւորութիւն ստացած են. ասոնց մէջ կայ մանուսանդ մէկը, որ իր ծանրութեամբ բոլոր մնացածները կը գերազանցէ: Կ'ուզեմ խօսիլ կալմակերպուած պատերազմին վրայ:

Երբ նկատի կ'առնուին այն միլիոնաւոր անհատները, յաճախ ամենէ լաւագոյնները թէ մաքով եւ թէ մարմնով, մարդկութեան ծագիկը, այնքան էակներ որոնց կը վերագրուի խոտորէն անշարժ եւ աղարդիւն կեանք մը, այն անհուն գումարները, որոնք հարկաւոր կը դառնան ամեն օր բանասկներու եւ պատերազմական մթերքներու հոգացողութեան, որ այնքան մարդկային խոշոր ոյժեր կը ներկայացնեն, այն ամեն ջանքերը որ պարսպ տեղ կը շապուռին գէնքերու եւ ուրիշ ջնջումի ծառայող գործիներու

ստեղծագործութեան, եւ այն մնունգը, որ կ'ընծայուի բարբարոս միտքին, մարդ կը սարսափի այդքան ողբալի պայմաններու մէջ գոյութիւն ունեցող եւ մարդկութեան տրուած անգին կորուստին մեծութեան առջեւ: Արդ, ի՞նչ միջոցի դիմելու է ուժգնապէս կոռելու համար այդ պատուհասին դէմ:

Օրէնքը եւ հասարակութեան կարգը կը պահանջեն բացարձակապէս կազմակերպուած ոյժի մը պահպանումը. ոչ մի համայնք կարող է իր գոյութիւնը պահպանել եւ յաջողիլ առանց խիստ կարգապահութեան մը: Ամեն երկիր պարսաւտը է ինքզինք պաշտպանել՝ երբ հարկը կը պահանջէ: Այս օրուան պայմանները յաճախ երէկի պայմաններու հետեւանքներ են, եւ ոչ ոք կարող է վաղուան համար արմատական փոփոխութիւն մը սպասել: Եթէ բոլոր ազգերը զինաթափ լինէին միանգամայն, խիստ հաւանական է որ այդ բանէն պիտի հետեւէր պատերազմէն աւելի վատթար՝ իրերու վիճակ մը: Ընդհանուր աշխարհի խաղաղութիւնը գեղեցիկ երազ մ'է, բայց կարող չէ ընդհուպ իրականութիւն գտնել: Նոյն իսկ վերջերս սեռանք որ աշխարհի մէջ ամենէ մեծ հեղինակութիւն ունեցող մարդու մը ազնիւ եւ վեհանձն ջանքը, այդ մասին, առերեւոյթապէս անարգիւնք անցաւ: Ու այս բանը զարմանալի չէ, որովհետեւ աշխարհիս վրայ խաղաղութեան հաստատումը, արդի ժամանակներու մէջ, Ֆիզիքական անկարելիութիւն մ'է: Այն անիւրի պարագան է ասիկա, որ կը դառնայ ուղղութեան մը մէջ եւ մարդ կարող չէ հակառակ կողմը դարձնել, առանց անոր արագութիւնը նուազեցնելու, առանց զայն կեցնելու կամ առանց զայն վերստին քալեցնելու՝ հետզհետէ աւելցնելով իր գնացքը դէպի հակառակ կողմը:

Ըսին որ խոշոր ուժով մը օժտուած թնդանօթներու կատարելագործումը վերջ մը պիտի գնէր պատերազմին: Միևնոյն բանը եւ ալ խորհեցայ երկար ժամանակ, բայց հիմա կը հաւատամ որ ատիկա անպիսի սխալ մ'էր: Չէնքերու կատարելագործումը մեծապէս կրնայ բարեփոխել պատերազմի պայմանները, բայց ոչ զայն կեցնել: Ընդհակա-

ոսկը ես այն կարծիքէն եմ որ ամեն նոր հնարուած զէնք,
 ամեն մէկ նոր քայլ այդ հանգամանքներու մէջ, կարող
 է լինիլ կոչ մը միայն նորանոր տաղանդներու գէպի նոր
 ճարպիկութիւն մը, քաջալերութիւն մը՝ նորանոր ջան-
 քերու, աւետիս մը՝ շարժունութեան եւ նոր առաջնորդ-
 թիւն մը համանման չափով մը մէջ: Վերագաւանանք թըն-
 դանօթի վառօդի գիւտին: Կարելի՞ էր երեւակայել այդ նո-
 րութեան հետեւանքով՝ այնքան արմատական փոփոխու-
 թիւն մը՝ քան այսօրուանը՝ զինուորական արուեստին մէջ:
 Երեւակայենք. պահ մը որ կ'ապրինք այդ հեռացած ժամա-
 նակին մէջ. չպիտի կարծէինք որ պատերազմին վախճանը
 հասած էր, երբ ձիաւորին զրահը այլեւս ծիծաղելի առար-
 կայ մ'էր, երբ Ֆիզիքական ոյժը, ճարպիկութիւնը, ու-
 բոնք այնքան կարեւորութիւն ունէին առաջ, բաղդատա-
 բար անարժէք բաներ կը դառնային: Եւ սակայն, վառօդը,
 հեռու պատերազմին վախճան մը գնելէ, բոլորովին հակա-
 ռակ հետեւանք մը եւ, իրերու գրութեան վրայ՝ առաջնորդիչ
 ներգործութիւն մը ունեցած է: Չեմ կարծեր որ պատերազ-
 մի դարը իր փակումը ունենայ քանի մը գիտական եւ ի-
 տէլալական առաջադիմութիւններով, որչափ ատեն որ պո-
 յութիւն պիտի ունենան այն տեսակ պայմաններ, որոնց
 մէջ այսօր կ'ապրինք, որովհետեւ պատերազմը ինքնին գի-
 տութիւն դարձած է եւ իր մէջ կը պարփակէ ինչ ինչ նուի-
 րական զգացումներ՝ որոնցմով հազիւ թէ մարդ կարող լինի
 տողորուիլ: Իրօք, կասկածելի է որ մարդիկ, որ պատրաստ
 չպիտի լինէին կռուելու բարձր սկզբունքի մը համար, կա-
 րող լինէին ուրիշ բանի մը օգտակար դառնալ: Հոգին չէ
 որ մարդը կը ներկայացնէ եւ ոչ ալ մարմինը, այլ հոգին
 ու մարմինը միանգամայն: Մեր առաքինութիւններն ու սը-
 խալանքները անբաժանելի են, ինչպէս ոյժն ու հիւթը:
 Որտեղ որ անոնք կազմալուծուին, հոն այլեւս մարդը
 գոյութիւն չունի:

Յաճախ ուրիշ աւելի զօրաւոր փաստ մը մէջ տեղ կը
 գրուի, առարկելով որ ի մօտոյ պատերազմի անկարելի պի-
 տի դառնայ, որովհետեւ պաշտպանողական միջոցները՝ յար-

ձակումներն ապարդիւն պիտի դարձնեն : Այս բանը հիմնական օրէնքի մը հետեւութիւնն է միայն որ կը բացատրուի սա հաստատողութեամբ . աւելի դիւրին է քանդել քան թէ շինել : Օրէնքը կը սահմանէ մարդկային կարողութիւնները եւ անոր պայմանները : Եթէ այդ պայմանները լինէին այնպէս որ աւելի դիւրին լինէր շինել քան թէ քանդել, մարդը անսայթաք պիտի առաջանար, ստեղծելով եւ ըստեղծագործելով անհունապէս : Բայց այդպէս չեն ընաւ երկրային կեանքի պայմանները : Այն մարդը որ կարող պիտի լինէր այդ բանին հասնիլ, մարդ մը չպիտի լինէր այլ աստուած մը : Պաշտպանողականը միշտ իր առաւելութիւնը պիտի ունենայ յարձակողականին վրայ, բայց այս բանը երբէք բաւական չպիտի լինի պատերազմին վախճան մը դնելու համար : Պաշտպանողական նորանոր միջոցներ գործածելով, պիտի կարողանանք ամբողջները անմատչելի դարձնել եւ պահպանել ամեն յարձակումի դէմ, բայց երբէք, այս եղանակով, կարող չպիտի լինինք արդիւն երկու պատերազմական նաւեր բաց տեղ իրարու դէմ կռուելէ : Եւ եթէ այսպէս տրամաբանելով ծայրայեղութեան հասնինք, կուզանք այն հետեւութեան թէ լաւագոյն կը լինէր մարդկութեան համար՝ որ պաշտպանողականն ու յարձակողականը, երկու հակառակ կողմերու մէջ, հաւասար լինէին, որովհետեւ եթէ ամեն երկիր, նոյն իսկ ամենէ փոքրը, կարողանար շրջապատուիլ բոլորովին անանցանելի պարիսպով մը, ամեն վտանգ արհամարհել կարենալու, այդ բանէն պիտի հետեւէր մարդկային առաջագիմութեան խիստ աննպաստ իրերու վիճակ մը : Միայն ազգերու մէջ կանգնած պատուարներու բարձունքն է որ քաղաքակրթութիւնը կրնայ պէտք եղածին պէս իր բարերար գերը կատարել :

Կը պնդեն դարձեալ որ թռչող մեքենաներու գիւտ մը իրեն իբր հետեւանք պիտի ունենայ ընդհանուր աշխարհի խաղաղութիւնը : Այս հայեցակէտը, ըստ իս, դարձեալ բոլորովին սխալ է : Օղային ճամբորդութեան գաղափարին յաղթանակը, անտարակոյս մօտալուտ է, բայց ատիկա ոչ

մէկ կերպով արդի քաղաքականութիւնը պիտի փոխէ: Արգարեւ, անմիջապէս կարելի է ըսել որ այդ կարծիքին մէջ տրամադրանութիւն չկայ, քանի որ գերակշիռ պետութիւն մը, ինչպէս Մեծ-Բրիտանիան, կարող պիտի լինէր իւրացնել վերին հեղինակութիւն մը օգին մէջ ինչպէս որ ունի ծովին վրայ: Առանց մարգարէ մը լինելու յաւանտտութիւնը ունենալու՝ չեմ վարանիր ըսել թէ քիչ տարիներէ յետոյ պիտի հաստատուի «օգային պետութիւն» մը, որուն մայրաքաղաքը Նիւ-Եօրքէն շատ հեռու չպիտի գտնուի: Բայց անիկա չպիտի արդիլէ որ մարդիկ ուղածնուն պէս իրենց կռիւը շարունակեն: Պատերազմի իտէալական կատարելաբժումը, վերջի վերջոյ, պիտի առաջնորդէ պատերազմական ամեն զօրութիւն դէպի քաֆուն (energie potentielle) եւ պայթուցիկ ոյժի մը կերպարանափոխութեան, ինչպէս ելեքտրական խստուցիչի մը (condensateur) ոյժը: Այս ձեւին սակ պատերազմական ոյժը պիտի պահպանուէր առանց ճիգի. անիկա պիտի ունենար նուազ քանակութեամբ զօրութիւն, սակայն անհասկնալից ազդեցիկ պիտի լինէր:

Գալով թէ ինչպէս երկիր մը պէտք է պաշտպանել օտար շահատակութիւններու դէմ, օգտակար է դիտել սալ որ այդ բանը միմիայն կախուած է ոյժերու նուազումին կամ աճելուն գիւրազդեցութենէն կամ անհասկնալի յարաբերական եւ ոչ բացարձակ թիւէն եւ թէ՛ եթէ ամեն երկիր պակտեցնէր իր զինուորական ոյժերը, միեւնոյն համեմատութեամբ ընդհանուր ապահովութիւնը անմխարձելի պիտի մնար: Միջազգային այն համաձայնութիւնը, որ նպատակ պիտի ունենար, բացարձակապէս հարկաւոր փոքրադոյնին իջեցնել պատերազմական բանակներու թիւը, արդի ժամանակի մէջ, ուր ամբոխային զստախարակութիւնն անկատար է, պիտի թուէր լինիլ անտարակոյս առաջին խելացի քայլը՝ մարդկային շարժումը յապաղող ոյժին տկարացումին ձգտելու համար:

Բարերազգաբար տիրող պայմանները չեն կրնար ընդմիջտ

տեւել, որովհետեւ նոր սարք մը հետզհետէ կը յայտնուի, կը հաստատուի: Բարերար փոփոխութիւն մը մտաւրում է ու ես պիտի փորձեմ հոս ապացուցանել բան մը, որ, իմ գաղափարներուս համեմատ, պիտի լինի առաջընթաց սկզբնական քայլը՝ դէպի ազգերու միջեւ խաղաղ յարաբերութիւններու հաստատումը, ու թէ ի՞նչ միջոցներով այդ խաղաղութիւնը պիտի իրականանայ:

Դառնանք նախնական դարերու մէջ, ուր միայն ամենէն զօրւորն իրաւունք ունէր: Իրաւարարութեան լոյսը տակաւին չէր փայլեր եւ տկարը զօրւորին խաղալիքն էր տկարը, այն ատեն բռնադատուած, ինքզինքը պաշտպանել սովորեցաւ: Գործածեց լախա, քար, պարսափիկ, նիզակ, աղեղ եւ նետ, ու ժամանակի ընթացքին մէջ, փոխանակ ֆիզիքական ոյժի՝ իմացակտնութիւնը եղաւ կոիւին վերջին վճիռն արձակող ազգակը: Բնաւորութեան վայրենութիւնը մեղմացաւ աստիճանաբար՝ բարձր զգացումներու զարթումով եւ անզգալարար, դարերու տեւական առաջ դիմութենէն վերջ, հասած ենք՝ անասնական եւ անիմաստ կոչոյ պատերազմէն՝ այսօրուայ «քաղաքակիրթ կոչուած պատերազմին», ուր կոտորները իրարու ձեռք կը սեղմեն, բարեկամական խօսակցութեաններ կը փոխանակեն, միջնադարին սիկարներ կը ծխեն, սպասելով խողխողումի վերսկսելու նշանին: Թողլով յոռետեսներն ազատ՝ այդ մասին խօսելու իրենց եղանակով, ըստ իս այդ բանին մէջ կայ բացարձակ տպացոյց մը՝ մէկ մեծ եւ բարերար առաջդիմութեան:

Ի՞նչ պէտք է լինի այս ձեւաչրջումին առաջիկայ շրջանը: Խաղաղութիւնը պիտի լինի: Ոչ երբէք: Մտաւոր փոփոխութիւնը, որ բնականօրէն պիտի ծագի գինուորական արուեստին արդի կատարելագործումներէն, պիտի լինի եւ պարտ է լինիլ կոիւի մէջ խառնուող անհատներու թիւին աստիճանաբար նուազումը: Պատերազմական մթերքը պիտի ունենայ տեսակարար մեծ կարողութիւն մը, բայց զայն գործունէութեան մէջ դնելու համար խիստ քիչ անհատներու պէտքը պիտի զգացուի: Այս եղանակի շրջումը

պիտի տայ հետզհետէ գերակշռութիւնը մեքենային կամ մեքենականութեան որ, իբր պատերազմի տարր, խիստ քիչ ծառայողներ պիտի պահանջէ ու այդ բանէ անխուսաբար պիտի ծագի բացարձակ լքումը այն դիպուող մեծ ամբոխային միութիւններու, որ դանդաղօրէն կը շարժին եւ զժուար գործածելի են: Պատերազմական ամեն պիտոյքի մէջ գլխաւոր նպատակ պէտք է ընտրել հասնիլ մեծապէս արագ ձեռնածութեան մը եւ ուժարտազրութեան ամենաբարձր աստիճանի մը: Մարզու կորուստը հետզհետէ պիտի տկարանայ եւ վերջապէս կոռուողներու թիւը շարունակաբար պակսելով, իրարու դէմ առ դէմ պիտի գան պատերազմական մեքենաներ եւ առանց արիւն թափելու ազդութիւնները միայն շահագրգիռ եւ փառամոլ հաղիսատեսներ պիտի լինին:

Երբ այս գեղեցիկ պայմանը իրականանայ՝ խաղաղութիւնը, կը կարծուի, պիտի ապահովուի: Բայց ինչ որ ալ լինի զօրեղ եւ արագահարուած թնդանօթներու կատարելագործումը, ինչպէս նաեւ պայթուցիկ ումբերու, քօրփիլիքօռներու եւ ուրիշ պատերազմական գործիներու, ինչ որ ալ լինի անոնց ջնջիչ կարողութիւնը, այս խտէալ պայմանը երբէք ձեռք չպիտի բերուի այսօր մեր աչքերուն առջեւ կատարուած առաջընթացի մասն ելանակով մը: Այս բոլոր գործիները գործածուելու համար՝ մարդուն միջամտութիւնն անհրաժեշտ կը դարձնեն. մարդը մեքենային անբաժան անդամը կը կազմէ: Իրենց նպատակն է ջնջել, սպաննել: Իրենց կարողութիւնը չարիք գործելուն մէջ կը կայանայ: Արդ, որչափ ատեն որ մարդիկ խառնուին պատերազմին մէջ, միշտ արիւն պիտի թափուի այնտեղ: Ու նոյն իսկ այդ արիւնը պիտի վերարձարձէ բարբարոս կերքը: Որպէսզի անապորոյն ոգին բարձուի՝ պէտք է արմատական նորութիւն մը, բոլորովին նոր սկզբունքի մը մուտքը. բան մը որ մինչեւ հիմա գոյութիւն չէ ունեցած՝ զինուորական արուեստին մէջ, բան մը՝ որ անխուսափելի կերպով, պատերազմը պիտի դարձնէ պարզ տեսարան մը, խաղ մը, առանց արեան՝ վէճ մը: Այս արդիւնքին հաս-

ներու համար, պէտք է պատերազմի մէջ մարդը դերէ հրա-
ժարի. պատերազմը միայն տեղի պիտի ունենայ գործիք-
ներու մէջ: Բայց ի՛նչպէս իրականացնել բան մը որ առնչ-
ծուածածային եւ անկարելի կ'երեւի: — Շինել մեքենայ մը
որ կարողանայ գործել որպէս թէ մարդու մը կապուած լի-
նէր եւ որ չի լինի միեւնոյն ատեն լծակներէ, գնդակնե-
րէ, անիւներէ, բազուկներէ բազկացած համախմբում մը,
մեքենայ մը, որ իր մէջ կրէ բարձր սկզբունք մը որով կա-
րող լինի իր բոլոր պաշտօնները ինքնին լրացնել, որպէս
թէ օժտուած լինէր իմացականութեամբ, փորձառութեամբ,
գասողութեամբ եւ մտաւորական կարողութեամբ: Այս հե-
տեւութեան միայն կարողացայ հասնիլ իմ ամբողջ կիսն-
քիս մտածումներով եւ գիտողութիւններով:

Այս գաղափարէն առաջնորդուած, Նիքոլա Թէսլա, կը
ջանայ շինել ինֆինաչարժ մը, որ ինքն իրեն կառավարելու ա-
մեն մասեր ունենալով՝ պէտք էր գրգռուիլ արտաքին ազ-
գակներէ: Այս մեքենան պիտի կարենար կատարել իր շար-
ժումները կենդանի էակի մը նման, որս ձեռեւ պիտի իւ-
րացնէր մեքենականութեան գլխաւոր յատկանիշները: Թող
ինքնաշարժը լինի միտով ու ոսկորով, փայտով ու պողպա-
տով, ի՛նչ հոգ, բաւական է որ կարողանայ կատարել իմա-
ցական էակի մը բոլոր գործողութիւնները, պէտք էր ու-
րեմն ունենար մտաւորական կարողութեան համապատաս-
խան տարր մը որ անոր վրայ ներգործէր՝ անակնկալ պա-
րագաներու մէջ, տրամաբանօրէն, գիտակցօրէն եւ փորձա-
ռարբ. վերջապէս, այս տարրը, ինքն, Թէսլա, անոր
մէջ կը գնէ իր իմացականութեամբ եւ ծանօթութեամբ՝
ու իր գիւտով կը ներմուծէ մեքենականութեան մէջ, նոր
ծանօթութեամբ օժտուած, շինութեան արհեստ մը, որուն
կուտայ իր անունը Թելինֆինաչարժ (télautomatique) ինչ
որ կը նշանակէ—արհեստ՝ որով կարելի է հակազգել եւ նը-
շանակիլ հեռուն ինքնաշարժներու բոլոր շարժումներն ու
գործողութիւնները:

Այս սկզբունքը, որ կարելի է կիրարկել երկրի վրայ եւ օդին մէջ շարժող բոլոր մեքենաներու, նաւի մը վրայ գործ կը դնէ: Շարժիչ ոյժը խոտացուցիչներու համախմբով մը կ'արտադրէ. առաջնորդը եւ ինքնաշարժ ղեկը յը պատրաստէ առաջինին հետ կապուած մասնաւոր շարժիչներով: Գալով զգայնական մասերուն, կ'ուղէ օգտուել այս բանին համար աչքի կազմութեան ձեւէն, բայց ականջի կազմութիւնը իրեն աւելի ուղիղ ճամբայ մը կը գծէ՝ նպատակին հասնելու համար: Արդիւնքին կը հասնի ելեքտրական հոսանք մը գետեղելով նաւին մէջ եւ կը յարմարեցնէ զայն ճիարագօնի մը միջոցով, ընդունելու համար հեռուն զտակուած «ելեքտրական ծածանիչի» մը իրեն հաղորդած թըրթոռմաները: Այս միջոցներով, գործողութեան տիրոջ փորձառութիւնը, գատողութիւնը կը ներմուծուէին մեքենային մէջ, որ այսպէս իր աշխատութիւնը ինքնին խելացիութեամբ կատարելու վիճակին մէջ կը գտնուէր. իբր թէ մարդ մը լինէր որ, կապուած աչքերով, կը գործէր իր ականջին խօսուած պատուէրներու համաձայն:

Նիքօլա Թէսլա կը հաւատտէ միեւնոյն տտեն որ այսօրան յաջող սկզբնաւորութենէ մը վերջ, այլեւս անկարելիութիւն մը չկայ աւելի ախպ մեքենաներ ստեղծել, որոնց ծրագիրն արդէն կատարելապէս պատրաստած կը կարծէ՝ երկար տարիներու տքնութիւններով:

Իր գաղափարներու մեծութեան վաւերացումը թողով ապագային՝ Նիքօլա Թէսլա կ'եզրակացնէ, — ազգերու մէջ խաղաղութեան յարաբերութիւններու հաստատութիւնը իրեն իբր հետեւանք պիտի ունենայ ոչնչացումը այն ոյժին որ կը յապաղէ մարդկութեան զօրեղութեան աճումը, բան մը՝ որ խնդիրին լաւագոյն լուծումը պիտի լինէր: Բայց այդ երազը պիտի իրականանայ՞ երբէք: Յուսանք ասոր: Եթէ տգիտութեան խաւարը գիտութեան լոյսով անհետանայ, երբ բոլոր ազգերը ի մի ձուլուին, երբ կրօնը հայրենասիրութեան տեղի տայ, երբ միայն մէկ լեզու գոյութիւն ունենայ, մէկ երկիր եւ մէկ նպատակ՝ մարդկային գործունէութեան նուիրուած, այն ատեն միայն երազը պիտի իրականանայ: ՆԻՔՕԼԱ. ԹԵՍԼԱ.

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիֆօլա Թեալաչի յօրուածին առիթով

Նիքալա Թէոլաչի կարծիքներու բնատուօթ լինը, իր պիտանքու վերին կարեւորութիւնը, ստեղծագործող մաքի բեղուն կարողութիւնները ճանչնալով հանդերձ, չպիտի կրնանք երբէք ընդունիլ թէ՛ որչափ առեն որ պատերազմի սկզբունքը գոյութիւն պիտի ունենայ, լինի այդ մեքենաներով, լինի այդ մարդոց միջամտութեամբ, կարելի պիտի լինի իմացական աշխարհի մէջ համերաշխութիւն առաջացնել: Իմացական աշխարհին մէջ կ'ըսենք, որովհետեւ մաքով թոյլը կոչուած է միշտ հանճարեղին սեղի տալ, ինչպէս տկարը զօրաւորին: Պայքարը, կեանքին մէջ, անխուստիելի հետեւանք մ'է, որ անհաւասարութեան հակող կշիռէն չկրնար զերծ մնալ: Մեծ պատերազմը պզտիկ պատերազմներու արգասիքն է, որոնք կը յայանուին մեր իւրաքանչիւր քայլափոխին, ամեն գործունէութեան մէջ, ամեն օր: Ջնջել ընդհանուրը՝ կը նշանակէ յայտարարել ջնջել մասնաւորը, բան մը որ բնականօրէն անկարելիութիւն է: Պատերազմի ձեւը կը փոխուի, այս՝ երբ փոխանակ մարդոց՝ մեքենաներ իրարու ճակատ առ ճակատ գան, սակայն որո՞նք են մեքենաներու հնարիչները—մարդիկ, անոնց հնարագէտ եւ ստեղծող միտքը. այս պարագային պայքարը մտաւորականի պիտի վերածուի, ու իմացականօրէն յաղթանակը անոնց պիտի լինի, որոնք զօրեղ կարողութիւններ եւ բեղուն միտք ունին: Հաւասարութիւն, հա-

մերաշխութիւն, խաղաղութիւն թէեւ անվիճելի օգտակար սկզբունքներ են մարդկային ճակատագրի բարելաւութեան, սակայն, դժբաղդաբար, իրենց գոյութեան իրաւունքը կը դտնեն վերացական տեսութիւններու եւ անշոջափելի բմբռնումներու մէջ: Թող վերցունին ազգերու բաժանումի պատուարները, թող մարդիկ մէկ եզրայրութիւն մը կազմեն, պատերազմը, պայքարը, կռիւը անընդհատ պիտի շարունակուի: Եթէ կարենանք անոր մանրանկարը ջնջել, կրնանք յուսալ, այդ վայրկեանէն ընդհանուր խաղաղութեան մը իրականանալու հաւանականութեան, — մարդկային ընկերութիւններու մտաւորական անխախտելի անհաւասարութիւնը այդ յոյսը կ'առեւտարէ: Վաղաքակրթութենէն սպասենք ատիկա, — մարդկային ըմբռնումներու գիտական վայրենութիւնը՝ այդ շրջանին մէջ աւելի շեշտուած, անողորմելի նիւթապաշտութիւն մը, դրականութիւն մը ծաւալելով՝ այդ նուազ լոյսն ալ կը մարի:

«Պայքարը կը վերջանայ այն ատեն սիւսն երբ պայքարողներ չգտնուին» . . . :

ՄՈԳ-ՊԵՏ

Ձ Ե Ի Ա Շ Ր Ջ Ո Ի Ս

(Transformisme)

Ուսումնասիրեց

Մ Ի Ս Ա Ք Պ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր Ե Ա Ն

4.

Ձեռաչրջում եւ Ստեղծագործական Վարդապետութիւն. —
Իրենց սարքերոսքիւնը. — Ձեռաչրջումի կիսաւերջագործումը :

Կեանքը շարունակութիւն մ'է ժամանակին եւ միջո-
ցին մէջ. այս իրողութիւնը, արդի գիտութեան հիմնական
գիւտերէն մէկը, հաստատուած լինելով ձեռք բերուած ան-
համար ճշմարիտ ծանօթութիւններու վրայ, տակաւին որ
եւ է ուժեղ պատճառարանութեամբ տկարացած չէ: Այս
հայեցողական ճշմարտութիւնը լսելէ վերջ, պիտի հար-
ցընէինք թէ ի՞նչպէս գոյութիւն ստացան ուրեմն այն բազ-
մաթիւ կենդանական ձեւերը, որոնք ծագած են նախապէս
գոյութիւն ունեցող կենդանի էակէ մը եւ որոնք զանա-
զան սեռակներու մէջ կը ներկայանան:

Շատեր կարծած են լուսաբանել սեռակներու զանազա-
նութեան պատճառները՝ ենթագրելով որ անոնք շարունա-
կութիւնն են անշատ ստեղծագործութիւններու եւ թէ ա-
նոնք ունին այսօր այն ամեն յատկանիշները ինչ որ ու-
նէին իրենց ստեղծագործութեան օրը: Ասիկա վարդապե-
տութիւն մ'էր զոր Քիւլիէ ինչպէս նաեւ Լիննէ կ'ընդու-
նէին եւ որ ընդունուեցաւ բաւական երկար տարիներ:

Առերեւոյթօրէն այդ տեսութիւնը կարող էր ճշմար-
տութիւնը սքողել, քանի որ տեսակները կը ներկայացնեն

անհատներու հասնախաբուսներ կամ անբողոքարիւններ, որոնք խիստ կը նմանին իրարու եւ իւրաքանչիւր տեսակ կը թուի սերած ըլլալ միակ գոյգի մը: Բայց մանրամասնութեան մէջ, տեսակներու համար ժամանակաւոր կերպով դժուած այս սրոշ սահմանը, պարզօրէն երեւցաւ որ հաստատ հիմունեանալէ բոլորովին հեռի է: Ու այն գաղափարը ծնաւ թէ եւ թէ երբէք տեսակները ստեղծուած են ուղղակի կերպով, անոնց թիւը այնքան չէր որքան տեսակ ունինք այսօր. ընդհակառակը առաջինները դանդաղ եւ շարունակական կերպարանափոխութիւններով եղափոխուեցան հիմնովին եւ ծնունդ տուին նորանոր տեսակներու: Ուրեմն այն վայրկանին երբ ընդունուեցաւ թէ տեսակները անխախտելի չեն. թէ անոնք կրնան ձեւաշրջուիլ, այն վայրկեանէն գոյութիւն ունեցաւ նոր վարդապետութիւն մը որ կոչուեցաւ Ձեւաշրջում: Ամփոփարար այս վարդապետութեան սկզբունքն է թէ «Այսօր գոյութիւն ունեցող իւր տեսակները կամ անոնք որ գոյութիւն ունեցած են անցեալին մէջ, իրարմէ կը սերին եւ իբր անդամներ միեւնոյն ընտանիքի իրարու հետ միեւնոյն ազգակցութիւնն ունին»:

Տեսակներու ծագումը մեկնաբանող վարդապետութիւնները ուրեմն երկուքի կը բաժնուին. ա) Ստեղծագործական կամ նպատակաւոր եւ բ) Ձեւաշրջական վարդապետութիւններ:

Այս վերջինին վրայ մանրամասնօրէն պիտի խօսինք մեր ուսումնասիրութեան շարունակութեան մէջ. բաւականանաք այս անգամ մասնանիշ ընել այն տարբերութիւնը որով այդ երկու տեսութիւնները իրարու կը հակառակին:

Ստեղծագործական տեսութեան մէջ ենթադրուած է որ, ինչպէս տեսանք, ամեն տեսակ՝ մասնաւորապէս ստեղծուած է զրոյ առ զոյգ: Այն վայրկեանին ուր կ'ընդունուի այս հայեցողութիւնը, պէտք է նաեւ այն վայրկեանէն ընդունիլ թէ անոնք ստեղծուեցան նպատակի մը համար: Այսպէս առաջնորդուած՝ շատեր ջանացած են ստեղծագործութեան վերջին նպատակը փնտռել եւ հասած են քմած ին գաղափարներու, ինչպէս՝ ի՞նչ բանի կը ծառայեն ոջիւնները, ի՞նչ բանի

լուերը, եւայլն, ու անընական բացատրութիւններու եւ տեսութիւններու յանգած են: Այսպէս Պէրնարտէն տը Սէն Փիէն (Harmonie de la nature) բնական պատճառներ փրնաւելու ելած է. «Ի՞նչու համար սեխը կողեր ունի, — ընտանիքով ուտելու համար. ի՞նչու համար գդուժը կողեր ունի եւ աւելի մեծ է, — որովհետեւ գրացիներու հետ ուտելու համար է »:

Ձեւաշրջումը, որ չընդունի թէ տեսակները անխախտ են, ու կը հաւատայ որ անոնք կրնան ուրիշ տեսակներու ծնունդ սալ, առաջին վարպապետութեան անհիմութիւնը ցոյց կուտայ՝ մասնանիչ ընելով մասնաւորապէս այն սկզբունական գործարանները, որ գոյութիւն ունին կենդանիներու վրայ կծկուած եւ տկարացած վիճակի մը մէջ. — աչքեր այն կենդանիներու մօտ, որ խաւարի մէջ կ'ապրին. հերձատամներու գոյութիւնը՝ որոճացողներու սազմին միջնակզակին ոսկորին վրայ, որոնք երբէք չեն խոշորնար եւ վերջերը կ'անհետանան. մարդուն սկզբնական պոչը, որ կը տեսնուի սաղմային առաջին ամիսներուն մէջ, ինչպէս նա եւ ուրիշ բազմաթիւ իրողութիւններ:

Տեսակը ուրեմն կատարեալ չէ եւ չէ ստեղծուած որոշ նպատակի մը համար:

Ի՞նչպէս տեսակները իրարմէ սերեցան՝ ձեւաշրջումի տեսութեան համեմատ: Ասիկա հասկնալու համար պէտք է ճանչնալ փոխակերպութեան (variation) երեւոյթը: Երբ կը քընտուին միեւնոյն տեսակին պատկանող թիւ մը կենդանիներ, կը հաստատուի որ անոնց ամբողջը հետու է յար եւ նման լինելէ: Հարիւրին մէկ կը գտնուի գոնէ որ չի նըմանիը մնացածներուն եւ կ'ըսեն որ վերջին ձեւին պատկանողները փոխակերպութիւն մը կը ներկայացնեն: Եթէ այս բանը ծայրայեղ աստիճանի մը մղուած լինի, անոր՝ չեղում, հրէջ եւայլն արտոնները կուտան: Արդ, օրէնք է որ փոխակերպութիւնը սահման չունի, իրերու կարելի եւ իրականալի տեսակէտներով: Այս բանը դիտելու համար բաւական է կենդանական աշխարհին մէջ մէկ երկու թեթեւ խուզարկութիւններ կատարել:

Որպէսզի նոր տեսակ մը առաջանայ պէտք են պարզապէս հետեւեալ պայմանները. — 1, կերպափոխութիւն մը գոյութիւն ունենայ. 2, այդ կերպափոխութիւնը ծնունդ տայ տարբեր պէտքերու՝ կերպափոխուած անհատին մէջ եւ 3, ամբողջութիւն պատահի :

Երկրորդ պայմանը անհրաժեշտ է նոր տեսակին գոյութեան պահպանումին, կեանքի կռիւին մէջ նման պէտքով տեսակներու գոյը չլինելու համար : Երրորդ պայմանը թէեւ հիմնական կարեւորութիւն ունի, սակայն այնքան յստակ չէ իր սուած փաստերուն մէջ :

Ձեւաչըջումի վարդապետութիւնը ժամանակակից գիտութեան մէջ բաւական երկար ատեն սաղմային վիճակ մը անցուց : Պիւֆօն պայծառօրէն յայտնած էր այն գաղափարը թէ կրնային դիակները իրարու մէջ կերպարանափոխուիլ՝ « կենդանական մասնիկներու տեսութեամբ » : Կ'ըսէր. « կենդանի էակներու նիւթը, մահէն վերջ, կը պահէ կենսականութեան մնացորդ մը : կեանքը կը կենայ էապէս՝ մարմիններու վերջին մասնիկներուն մէջ : Այդ մասնիկները կարգաւորուած են կաղապարի մը մէջ : Որչափ էակներ կան, այնքան տարբեր կաղապարներ կան, եւ, երբ մահը կը դադրեցնէ կեանքի գործարանաւորութեան խաղը, այսինքն այդ կաղապարին ոյժը, մարմինին տարբազարութիւնը (décomposition) կ'սկսի, եւ գործարանաւոր մասնիկները, որոնք բոլորն ալ վերստին կ'ապրին, ազատութիւն կ'ստանան մարմիններու նեխումին եւ փտութեան պահուն, կ'անցնին ուրիշ մարմիններու մէջ՝ անմիջապէս երբ կը ձգուին ուրիշ որ եւ իցէ կաղապարի մը ուժովը. միայն առաջ կուգայ ինքնասերումի անհունութիւն մը այս փոխանցական միջոցին, ուր կաղապարի ոյժը չի գործեր, այսինքն այն պահուն երբ գործարանաւոր մարմինները ազատ կը գտնուին միտած եւ տարբազարուած մարմիններու մէջ. այս գործարանաւոր մարմինները, միշտ գործօն, կ'աշխատին վերիվայր շրջել նեխած նիւթը. կը տիրանան անոր

քանի մը կոչա մասերուն եւ իրենց միացումովը կը կազմեն գործարանաւոր փոքրիկ մարմիններու բազմութիւն մը, որոնցմէ ոմանք, ինչպէս հողաճճիները (vers de terre), սունկերը, եւայլն, կը թուին թէ բաւական խոշորէկ կենդանիներ կամ բոյսեր են. բայց ուրիշներ, որոնց թիւը անհամար է, միմիայն մանրադիտակով կը տեսնուին : Բոլոր այս մարմինները զոյութիւն կը ստանան միայն ինքնասերումով, եւ կը գրաւեն այն սահմանը, միջոցը զոր բնութիւնը դժած է կենդանի գործարանաւոր պարզ մասնիկին եւ կենդանիին կամ բոյսին միջեւ. զարձեալ կենդանիներու այս շարունակութեան եւ շլթայաւորութեան մէջ, կը գանուին բոլոր երեւակայելի աստիճանները եւ նրբութիւնները. կենդանիներ՝ որ կ'իջնեն ամենէն լաւ գործարանաւորուած կենդանիներէն մինչեւ պարզապէս գործարանաւոր մասնիկին » :

Ինչպէս կը տեսնուի, իր բոլոր տեսութիւնը սա պարզ ըմբռնողութեան մէջ կը կայանայ, այսինքն այն տարրերը որ կը գոյանան բարձր դասակարգի պատկանող կենդանիի կամ բոյսի մը մարմինին քայքայումովը, կրնային վերստին ինքնաբերաբար մտնել նորանոր գործարանաւոր կազմակերպութիւններու մէջ եւ կազմել նորագոյն կենդանի էակներ, տարրեր տեսակներով : Այս տեսութեամբ ձեւաչըջումի վարդապետութիւնը շատ համակիրներ չստեղծեց, մինչեւ զարուս սիլիքը, ուր Լամարք եւ Ժօֆրուա Սէն Թ'իլէո միւլենոյն տեսութիւնը ձեռք առին՝ աւելի գիտական զօրաւոր հիմերու վրայ դրուած. բայց ուժգին դիմագրութեան մը հանդիպեցան. միայն անգլիացի հռչակաւոր բնագէտին, Տարուինի, հոյակապ աշխատութիւններէն (*) վերջ է որ ձեւաչըջումի վարդապետութիւնը գտաւ պէտք եղած զընահատութիւնը եւ աշխարհի մէջ տարածուեցաւ :

(*) Տարուինի գլխաւոր աշխատութիւնն է Տեսակներու ծագումը, զոր հրատարակած է 1859 ին :

ԹԵԼԱԴՐԵԼԻՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (*)

ԵՒ ԻՐ ՇԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

(La Doctrine de la Suggestibilité)

Մեր ճիւղը կ'ուսումնասիրէ երկու կարգի խնդիրներ, ա) քնէածուծիւն [hypnotisme] եւ թելադրութիւն [suggestion] . բ) յարակից խնդիրներ, այսինքն հոգեկան ոյժ [force psychique], հեռախառութիւն [télépathie], հեռագրեցութիւն, գաղափարի վտարում, եւ այլն :

Թոյլ տուէք ինձ խօսիլ, հոս, միայն առաջիններու վրայ, որոնք ուսումնասիրած եմ անհատապէս, թող լո՛ւ մեր ձեռնհաս եւ մասնադէս աշխատակիցներուն՝ երկրորդներու վրայ խօսելու հոգը :

Քնէածուծիւն եւ թելադրութեան պատկանող հարցերը մեր համայնածողովին (congrès) մէջ իրենց անզն ունին, որովհետեւ գաղտնականութեան (occultisme) շրջանէն դուրս ելած են՝ մտնելու համար հոգեբանական շրջանին մէջ :

(*) Այս ատենախօսութիւնը ըրած է Տօք. Պէրնհայմ, աշխարհածանօթ հռչակաւոր գիտնական եւ փրօֆեսօր Նանսիի բժշկական համալսարանի, բնախօսական Միջադպոյցին Կրք համաժողովին, ճրգ ճիւղի աշխատութիւններու բացումին ատիթով :

Այն երեւոյթները զոր մենք կ'ուսումնասիրենք ոչ խորհրդաւոր են եւ ոչ ալ հրաշքի արդիւնք, այլ կապուած են մեր գործարանաւորութեան բնական գործառնութեան հետ : Անոնց արտադրումը չի սխառունակեր ո՛չ մասնաւոր կազակերոյ (fluide) մը եւ ո՛չ ալ գրգռած կամ ինքնաբեր խփերի (hystérique) գրգռում մը . բնախօսական յատկութիւններ, զոր մենք կը լուսաբանենք, կը հաստատենք, բայց չենք ստեղծեր : Ու այդ տեղ է որ, կարծեմ, ժամանակակից գիտական ծանօթութիւնը իրականացուցած է մեծ առաջգիմութիւն մը, արտաբերելով գաղտնականութենէ եւ խփերի խփխփովէ շարք մը երեւոյթներ, որ զեռ քանի մը տարիներ առաջ խղճուած էին այդ կոշտ պատեանին մէջ : Այս առաջգիմութիւնը կը պարտինք մեր Նանսիի գալրոցին :

Հին մագնիսականութիւնը իր արտաստովոր ձեւերով (manipulations), — Մէսմէրեան տաշտակներ (baquets de Mesmer), ապակեայ գաւազանիկներ, փելյզէկիւրեան մագնիսացած ծառ եւ այլն, — ամեն բան կը կարծէր թէ կը ծագի կենդանական կամ աստեղային կազակերպէ մը . որ մարդկային գործարանաւորութեան նոր յատկութիւններ կուտար : Այն երեւոյթները, զոր այսօր թելադրական կը կոչենք, արդիւնք էին մասնաւոր կազակերպի մը՝ մագնիսական անուան սակ :

Մագնիսականութեան յաջորդեց քնէածութիւնը՝ 1843 ին : Փայլուն կէտի մը վրայ սեւեռումը ներգործելով միաքի եւ ֆիզիքական աչքի վրայ, առաջ կը բերէ քուն կամ ատոր մօտաւոր՝ քնէածական կոչուած՝ վիճակ մը, որուն մէջ մարդ կարող է իրականացնել այն ամեն երեւոյթները՝ ինչպէս որ էին հին մագնիսականութեան մէջ . որոնցմէ կը պակսի միայն իսթէրիք ջղաձգութիւնը . երեւոյթ մը, որ հետեւանք էր մագնիսացնողներու այն ահարկու ձեռնածութիւններուն, որոնք կը կատարուէին ենթակային մօտ : Գնէ՛ս՝ քնէածութիւնը կ'արտադրէ քուն, լուսնոտութիւն (catalepsie), անզգայութիւն, զառանցականութիւն՝ ոչ թէ խորհրդաւոր ոյժի մը կամ ձեռնածուէն բխող մագնիսական կազակերպի մը՝ շնորհիւ, այլ աչքին կախարդուած ցանցի-

նիէն (réline) եւ կեդրոնացած մտածումէն ներգործուած ջղային դրութեամբ:

Երբորդ շրջանը սկսաւ 1866 ին, Լիէտուալի երեւնալովը: Ըստ իրեն փայլուն կէտի մը վրայ սեւեռու մը՝ երեւոյթնեւրուն ծագելուն հարկաւոր չէր: Ոչ թէ բնա-հոգեկան ազդեցութիւն մ'է, որ խնդիրի առարկայ է, այլ պարզապէս հոգեկան ազդեցութիւն մը: Քունի գաղափարը բաւական է՝ կենթական քնացնելու համար: Ամեն բան գաղափարին, թեւադրութեան մէջ է: Դրդուած քունը, որ թեւադրելիութիւնը կը չեղէ, ինքնին թեւադրութեան երեւոյթ մ'է:

Երբեմնի մագնիսական երեւոյթները, որ հետզհետէ քնէածական, պրեւսիան (braidique), եւայլն, կոչուեցան, թեւադրութեամբ ծագած քունի արգասիք են:

Դիտողութիւնը ինչ առաջնորդած է քայլ մը եւս աւելի հեռուն երթալ: Վերջնական կերպով հաստատեցի թէ դրդուած քունը հարկաւոր չէ քնէածական երեւոյթները արտադրելու համար, թէ այս բոլոր երեւոյթները, — անըզգայութիւն, լուսնոտութիւն, անկամ գործ, հնազանդութիւն, եւայլն, — կրնան ձեռք բերուիլ շատերու մօտ՝ արթուն վիճակի մէջ, առանց նախնական գործողութիւններու՝ միմիայն խօսքով, թէ թեւադրելիութեան եւ զառանցանքի (hallucination) չափազանց կենթակաները, դրդուած քունէ մը յետոյ, առանց քունի նոյնքան թեւադրելի են, թէ ինչ որ մագնիսականութեան, քնէածութեան, թեւադրական քունի կը վերագրէին՝ պարզ եւ բնական յակութիւն մ'է մարդկային ուղեղին, որ փոփոխական է որպիսութեամբ եւ սյփզնութեամբ, կենթականերու ինչպէս նաեւ անոնց թեւադրելիութեան համեմատ, այսինքն ուղեղին այն մասնաւոր ընդունակութեան՝ որով գաղափար մը կ'ստանայ եւ զայն գործողութեան կը փոխէ:

Թեւադրութեան գիւտը կրնար պատահիլ առանց ընկերացած լինելու մագնիսական կամ քնէածական գործնական աշխատութիւններուն: Հոգեբանները, բժիշկները պիտի յաջողէին ուղղակի կերպով ուսումնասիրել իւրաքանչիւր անհատի թեւադրելիութիւնը սեղն ու տեղը, յարա-

ճուռն վանազան ազդեցութիւններու տակ, օրինակ հաւատք, յուզմունք, քուն, ու մարմնացած ինչ ինչ նւթական գործնական աշխատութիւններու մէջ, չփուռ, ելեքարականութիւն, եւն: Խնդիրը յանկարծ հոգեբանական կերպարանք ստացաւ, ուր վեջնականապէս մտնելու ճակատագրուած է քանի մը խարխափումներէ վերջ, որոնք տակաւին չեն վերջացած: Թելագրութեան գաղափարը այլևս չպիտի ընկերանայ խորհիֆիլ եւ նոյն իսկ դրդուած քունին եւ այդ վարդապետութիւնը բոլորովին նստմանալէ հետո է այն հարաւանախօսական եւ խորհրդաւոր գաղափարով, որով կը կապուի մագնիսականութիւն եւ քնէածութիւն բառերուն: Ներեցէք ինձ, Պարոններ, իմ միօրեայ նախագահութեանս իրաւունքը չարաչար գործածելուս, ծանրանալով այն գաղափարներու վրայ՝ որոնք ինձ սեպհական են եւ որոնք ամենքէն չեն ընդունուած. գաղափարներ, զոր իմ սկզբնական փորձերուս մէջ գտայ եւ զոր օրըստօրէական գիտողութիւններ, ինձ համար, անհերքելի ճշմարտութիւններ կը դարձնեն:

Այսպէս ընդունուած՝ թելագրութեան վարդապետութիւնն եզականօրէն կ'ընդարձակուի եւ կը պարունակէ ամբողջ մարդկութիւնը. որովհետեւ թելագրութիւնը՝ իր բոլոր հետեւանքներով, ուրկից ալ որ ծագի, գաղափարն է, որ կ'ազդէ ուղեղին եւ գործի կը փոխուի. պատճառաւորականորթինն (determinisme) է որ մեզի գործել կ'ուտայ: Ան միայն փորձարկու թելագրիչէն առաջ չի դար, այլ նաեւ բոլոր չըջող կարծիքներէն՝ որոնցմով մարդս նմանողաբար կը ներդրածուի, բնազդներէն՝ որ պարտաւորիչ կը դարձնեն նախամտածուած խորհուրդները, իմաստասիրական, կրօնական, քաղաքական, ընկերական դաստիարակութենէն, ընթերցանութենէն, մամուլի պատճառած գրգռումներէն, յայտարարութիւններէ. ամեն բանէ առաջ առնաւորթենն (atavisme) եւ ընդոճութենէ (innéité), որ կը պատրաստեն ենթակային համար հոգեկան հող մը, ուր ըստ իրեն կը մշակէ բոլոր ստացած գաղափարները եւ զանոնք կ'արգասաւորէ: Փոքր ինչ պարզամտութիւն եւ սիրամո-

լուծիչն բաւական է ընդունելու համար առանց չափաւորումի պատասխանատուութեան եւ ինքնակամութեան (libre arbitre) վարդապետութիւնը: Մարդ իր անձին, բարոյական ուղեղի գերին է, որ կ'ազդուի արտաքին աշխարհէն, կ'որոճայ հաւաքուած ապաւորութիւններու վրայ՝ իր հոգեկան նեորոններով (neurones) եւ կը վերագործէ շրջապատային նէօրոններով: Ամբողջ աշխարհը կը ձեւաչափուի անհատական եւ հաւաքական թելագրումներու արտադրելովը. աշխարհի պատմութեան մէջ իրարու յաջորդող ընկերական մեծամեծ խոռոչութիւնները, պատերազմները, յեղափոխութիւնները, գէշ կամ լաւ, բոլոր կրօնական, հակակրօնական, աշգային եւ քաղաքական մոլեռանդութիւնները, եւն. անտարակոյս այդ պատմութիւնը կը բարեչրջեն՝ միշտ յեառադաջ ծփանքներու եւ ետ ընկրկումներու մէջէն՝ յաւիտենական վերսկսումով մը. ու բոլոր այդ պատմութիւնը կը լուսաւորուի գիտութեան ջահովը, որ վառուած է արգի հոգեբանութեամբ:

Բայց կը լսեմ որ իմ շուրջ՝ կ'ըսեն. «Ձեր դադափարով ամեն բան թելագրութիւն, պատճառաւորականութիւն, կասկածելի ինքնակամութիւն, կասկածելի բարոյական պատասխանատուութիւն է: Եթէ իր գործարանաւորութեամբ սահմանուած մարդը ճակատագրօրէն կը յեղափոխուի, առիկա կամքի ժխտումն է եւ մարդկային արժանապատուութիւնը. իսլամական անգործութիւնն է վարդապետութեան վերածուած, ճակատագրականութիւնն է: »

Այս պատճառաբանութեան, որ մեր վարդապետութեան սխալ ըմբռնումէն կը ծագի, պատասխանը դիւրին է:

Անտարակոյս, մենք ամբայնդուած ենք մեր բարոյական ուղեղով, բնազդներով, բնածին ձգտումներով, առհաւական թելագրումներով: Բայց այս բնական հոգեկան հողը, ինչ որ նախահայրերը մեր իւրաքանչիւրին փոխանցած են, մշակուած է, արգասաւորուած է գասախարակութեամբ: Բնածին սերմերը անպտուղ պիտի մնան, եթէ չեն կազմուած: Մեծ արուեստագէտուր, հանձարեղ հնարիչը, հմուտ թուագէտը կորսուած պիտի լինէին եւ չպիտի բա-

րեչընդունին առանց առաջմղիչ ոյժի մը, առանց հոգեկան զործօն որոճացումի մը, զոր կ'ամբողջացնեն, թաքուն ընդունակութիւնները կատարելագործելու եւ զանոնք գործունէութեան մէջ գնելու համար՝ վարպետներէ կառավարուած թելադրութիւնը եւ գիրքերը :

Եթէ դաստիարակութիւնը կը միջամտէ սերմէն հաւկիթ արտադրելու համար, կարելիութեան սահմանին մէջ, կը միջամտէ նաեւ չեղոքացնելու ախտաւոր սերմերու վարակումը, դիմադրելու բնածին ձգտումներուն արգելիչ թելադրութեան հակակշիռով մը : Ան կը զարգացնէ քննադատական եւ մտաւորական բարձագոյն կարողութիւնները, կը խոչորցնէ ֆոքորի ձեռներէց ազդեցութիւնը՝ ուղեղային ինքնագործունէութեան վրայ, կ'ստորադասէ բնազգը՝ տրամաբանութեան, ու, այսպէս գործելով, կը զօրացնէ բարոյական անկախութիւնը, մեղմացնելով հոգեկան կաշկանդումները, որոնք, բնածին կամ կրթողական, զայն իրենց կը ծառայեցնեն :

Ինչ որ թելադրութիւնը կը կիրարկէ դաստիարակելու համար զեռասի ուղեղները, միեւնոյն բան կ'ընայ ընել հաւաքական մարդկութեան մտաւոր եւ բարոյական կարգապահութեամբը. որովհետեւ ամբոխն ալ իր հոգեբանութիւնն ունի, որ այնքան լաւ կերպով նկարագրուած է Պ. Լըպօնէ. ամբոխը եւս մեծ մանուկ մ'է, վեհանձն՝ բայց բնազդական, ձգտողական, ծայրայեղօրէն թելադրական, մղուած յայտարարութենէ, նմանողութենէ, մամուլէն, խռովութիւններէ եւ կրքոտութենէ :

Թելադրութիւնը պէտք է որ միջամտէ բնազդական չեղումները զսպելու համար : Պէտք է որ ազատութեան պատրուակով կառավարութիւնները զինաթափուէին՝ քինախնդրութեան եւ բռնարարութեան թելադրիչ քարոզութիւններու հանդէպ : Պէտք է թողուլ ամբոխին մէջ տարածուելու ապառոզջ եւ վնասակար զաղափարներ, որ բարոյական հիւանդութեան համաճարակներու պատճառ կը դառնան եւ որոնց դարմանումը աւելի դժուար է քան առջեւը նախօրօք առնելը :

Կոյութիւն սենին հոգեկան-ախտաբանութիւն մը, հոգեկան-առողջաբանութիւն մը, թելագրիչ հոգեկան-ախտաբուժութիւն մը, որոնք ոչ միայն բժշկական են այլ բարոյական եւ ընկերական :

Այդ բանը, այդ երկասյրի սուրը, թելագրութիւնը, կը ճանչնան ամեն անոնք, որոնք զրկուած են բարոյական զգացողութենէ եւ կը նկրտին մոլորեցնել, ապականել ամբոխը : Ամեն խղճամիտ մարդու պարտքն է զայն գործ դնել փրկարար նպատակով մը . ու որքան որ մարդ ուսումնասիրէ եւ խորապէս քննէ մարդկային թելագրելիութեան մեքենաբանութիւնը, այնքան պիտի յաջողի լաւապէս ճանչնալ իր անձը եւ ուրիշները եւ պիտի կարողնայ զայն ազդեցիկ կերպով գործածել :

Ու հիմա պիտի ըսու՞ի դարձեալ, որ թելագրելիութեան վարդապետութիւնը, մեր ըմբռնած եղանակով, կը յանգի ամուլ եւ վտանգաւոր ճակատագրականութեան մը : Այս պատճառաբանութեան ես պատասխանեցի : Իրօք, ուշի ու ուշով ուսումնասիրելով եւ տեսնելով թէ՛ որքան դիւրարեկ է մարդկային խեղճ ուղեղը, ներողամիտ զգացումներով կը լեցուի հոգեբան բարոյագէտին սիրտը : Բայց այս ուսումնասիրութենէն կը ծագի եզրակացութիւն մը եւս, որ իմ պիտի լինի, թէ՛ մարդկային ուղեղը կրնայ դաստիարակուիլ, ան կը գործէ եւ կը հակագործէ : Թելագրութիւնը հոգիին ուժնանձաւն ու արգելականութիւնն է : Թելագրութիւնը գործունէութիւնն է, պայքարն է, կեանքն է, վերջապէս մարդն ու ամբողջ մարդկութիւնն է :

Ինձ կը մնայ, պարոններ, ձեզի բարի պալուստ մաղթելու հաճելի պաշտօնս կատարել . իցի՛ւ թէ մեր ճիւղը կարենար համայնաժողովի մեծ գործին մէջ օգտակար ծառայութիւն մը մատուցանել : Մեր ուսումնասիրութիւններու շրջանակին պատկանող խնդիրները տակաւին կ'ընձուտ եւ մթին են եւ հետեւաբար այնտեղ կարծիքները բոլորո-

վին տարբեր: Մեզմէ իւրաքանչիւրը թող պարզէ իր գա-
ղափարները առանց անոնց ընդունելութեան վրայ ծանրա-
նալու: Վիճարանութիւններու բովէն յաճախ լոյս չի ծա-
գիր: Մէկ բան միայն մեր բոլորին ընդհանուր է, այն է
գիտութեան եւ ճշմարտութեան սէր:

Հ. ՊԵՐՆԱՅՄ

ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՃԱՊԵՏԱՆՈՑՆԵՐԸ

Ֆրանսայի մէջ կրթութիւնը երեք գլխաւոր ճիւղերու բաժնուած է, 1. Նախնական 2. Երկրորդական եւ 3. Բարձրագոյն :

Նախն. կրթութիւնը աշխարհական է, անոր վարժարանները կառավարական են եւ պարտաւորիչ ու ձրի է : Նախնական կրթութիւնը բացի Մայրական դպրոցէն եւ տարրական ու նախն. բարձրագոյն վարժարաններէն՝ ունի երկու կարգ վարժապետանոցներ, — Նախն. Վարժապետանոցներ եւ Եւրձրագոյն Վարժապետանոցներ :

Նախն. վարժապետանոցները (Ecoles Normales primaires) որ մեր այս յօդուածին նիւթը պիտի կազմեն, նպատակ ունին պատրաստել դաստիարակներ, մայրական, տարրական եւ նախն. բարձրագոյն վարժարաններու համար : Իւրաքանչիւր նահանգ ունի մէկ հաստ վարժապետանոց, այնպէս որ անոնց թիւը հաւասար է Ֆրանսայի նահանգներու թիւին :

Վարժապետանոցները գիշերօթիկ են, ու հոն աշակերտները կ'ընդունուին մրցումով, որովհետեւ կրթութիւնը ձրի է եւ ապագայ դաստիարակներու բազմը սպահովուած, կառավարութեան կողմէն :

Վարժապետանոցի մրցումին ներկայանալու համար պէտք է ստացած լինիլ նախն. Բարձր-Վարժարանի բարձրագոյն վկայագիրը : Բնգունելութեան տարիքն է 15 էն 25 : Իւրաքանչիւր շրջանաւարտ դաստիարակ պարտաւոր է առնուազն 10 տարի, կրթութեան մէջ մնալ, հակառակ պարագային պէտք է կառավարութեան վճարէ՝ մէկ անգամէն, 150) ֆրանք, իբր փոխարէն վարժապետանոցի մէջ իրեն եղած ծախքերուն :

Օտարներու ընդունելութեան պայմանները. — Օտարները կ'ընդունուին վարժապետանոց, առանց մրցումի. բայց պարտաւոր են վճարել ամեն տարի 500 ֆրանք : Ենթարկուած են միեւնոյն վարժարանական օրէնքներու : Եթէ ազատ ուսանող կը փափաքին լինել, պէտք է նախապէս մասնաւոր արածնութիւն մը ստացած ըլլան կրթական նախարարութենէն, որուն պէտք է խնդրագիրով մը դիմել, ամեն պարագայի մէջ, վարժապետանոց մտնելէ առաջ : Օտարներն ալ, երբ կանոնաւոր աշակերտ են, իրենց ուսումի աւարտումին, կը ստանան միեւնոյն վկայագիրը ինչ որ Ֆրանսացիները, — Բարձրագոյն Ուսուցչագիր (Brevet supérieur) :

Կրթական ծրագիր. — Ուսման ծրագիրը խիստ բեռնաւորուած է, նկատելով այն կարճ շրջանը, որ միմիայն 3 տարի կը տևէ : Իւրաքանչիւր տարի մէկ դասարան ունի եւ ստարկաները շղթայաւորուած են համընթացաբար :

Հոգեբանութիւն. — Բարոյագիտութիւն. — Մանկավարժութիւն

Ա. Տարի, Հոգեբանութիւն : Ետեւթը 2 ժամ (Իր նպատակը : Մանկավարժութեան հետ ունեցած կապը : Մարդկային կարողութիւններ : Գործօնութիւն : — Զգայութիւն : Հաճոյք եւ ցաւ : Բնտանեկան, ընկերական եւ ազգային զգացումներ : Կիրք եւն : — Իմացականութիւն : — Կամք եւն : Հոգեբանական ծանօթութիւններու կիրարկումը դաստիարակութեան մէջ :)

Բ. Տարի. — Բարոյագիտութիւն: Շաբաթը 2 ժամ (Տեսական բարոյագիտութիւն: Իր նպատակը: Բարոյական խիղճ: Ազատութիւն եւ պատասխանատուութիւն: Երախտագիտութիւն եւ պարտք: Բարիքն ու ճշմարիտ պարտականութիւնը, եւն: — Գործնական բարոյագիտութիւն: Անհասական, ընտանեկան, ընկերական, արգարութեան եւ քաղաքացիական պարտականութիւններ:)

Գ. Տարի. — Մանկավարժութիւն: Շաբաթը 2 ժամ (Վերաքաղ նախորդ տարիներու դասընթացքներու:)

Գործնական մանկավարժութիւն եւ զպրոցական վարչութիւն, 1. Մանկավարժական կազմակերպութիւն, 2. Կարգապահութիւն, 3. Փլխաւոր մանկավարժներ եւ իրենց վարդապետութիւններ:

Քաղաքական տնտեսութեան վրայ ծանօթութիւններ:)

Ֆրանսերէն լեզու.

[Ա. Տարի, շաբաթը 5 ժամ. — Բ. Տարի, 4 ժամ. — Գ. Տարի, 4 ժամ:]

1. Ընթերցանութիւն եւ շերտնայի սրտասանութիւն: 2 ժամ, ա] տարի. 1 ժամ, բ] տարի. 1 ժամ, գ] տարի (Բարձր ձայնով ընթերցում՝ դասական կտորներու, որոնց ամենէ կարեւոր մասերը գոց պէտք է լինին: Դասատուին հըսկողութեամբ եւ անկէ որոշուած անհատական ընթերցանութիւն: Բերանայի եւ գրաւոր վերլուծում այդ ընթերցումներուն:)

2. Ֆրանսիականութիւն եւ ֆրանսիական վարժարաններ: 2 ժամ, ա] տարի. 1 ժամ, բ] տարի (Ա. Տարի՝ Ուսումնասիրութիւն ֆրանս. քերականութեան: — Բ. Տարի՝ Նախորդ տարիին շարունակութիւնը եւ պատմական քերականութեան վրայ հիմնական ծանօթութիւններ: — Երկու տարիներու մէջ՝ ուղղագրական հրահանգներ, տրամաբանական եւ քերականական վերլուծում:)

3. Շարադրական վարժարաններ: 1 ժամ, ա] տարի. 2 ժամ, մնացեալ տարիներու մէջ:

4. Իրակ լեզուսանութիւն: 1 ժամ, գ] տարիին մէջ միայն:

Պատմութիւն

[Ա. Տարի, 3 ժամ.—Բ. և Գ. Տարի, 3 ժամ:]

Ա. Տարի (Հին պատմութիւն—Եգիպտացիներու, Ասորեստանի, Բաբելոնացիներու, Հրէաներու, Փիւնիկեցիներու և Կարկեզոնացիներու: Յոյներու և Հռովմայեցիներու պատմութիւն և Միջին դարու:—Բ. Տարի (Փամանակակից պատմութիւն:)—Գ. Տարի (18 դարէն մինչև մեր օրերը և Ֆրանսոյի արդի կառավարութեան կազմակերպութիւնը:)

Աշխարհագրութիւն [1 ժամ, բոլոր տարիներու մէջ:]

Ուսողական գիտութիւններ

[Ա. Տարի, 3 ժամ.—4-ական ժամ մնացեալ տարիներու մէջ] — Ա. Տարի (Թուարանութիւն—2 ժամ—և Երկրաչափութիւն—1 ժամ, —առաջին երկու գրքերը, համեմատական դիժեր, նմանութիւն:)—Բ. Տարի (Լրացուցիչ Թուարանութիւն և Երկրաչափութիւն մինչև գլան, կոն և գունդ):—Գ. Տարի (Համառօտ եռանկիւնաչափութիւն.—Պատրաստութիւն յատակագիծի.—Կետնաչափութիւն:)

Բնագիտական պատմութիւններ

[Ա. Տարի, 2 ժամ—Բ. և Գ. Տարիներ 3 ժամ.]

(Ա. Տարի (Բնագիտութիւն—Ծանրութիւն և ջրակայութիւն. Չայն:—Քիմիա—Սկզբնական ծանօթութիւններ և մետաղակերպներ:) Բ. Տարի (Բնագիտութիւն—Ջերմութիւն:—Քիմիա—Մետաղներ:)—Գ. Տարի (Բնագիտութիւն—Ելեքտրականութիւն, մագնիսականութիւն, լոյս, Ֆիզիքի մեքենական ծանօթութիւններ:—Քիմիա—Գործարանաւոր քիմիա և վերլուծում ու համադրութիւն:)

Բնական պատմութիւններ

[Բոլոր տարիներու մէջ շաբաթական 1 ժամ]

Ա. Տարի —Բուսաբանութիւն:—Բ. Տարի—Կենդանաբանութիւն:—Գ. Տարի—Երկրաբանութիւն:

Երրորդ տարին մէջ յատկացուած է 20 ժամ Առողջա-

պահուրեան, որուն ծրագիրն է, ջուր (խնկի եւ վարակուած ջուրեր, զանոնք մաքրելու միջոցները)՝ Օդ, Արնունդ, վարակիչ Հիւանդութիւններ, կղկղակ, օդաւէտ տուն եւ դպրոց (օդ, ջուր, հարկավայր եւն)։ վարակիչի հիւանդութիւններ դպրոցի մէջ (անոնց վրայ մասնաւոր ծանօթութիւններ) պատուաս. լնակիական առողջապահութիւն. կենդանիներու քանի մը հիւանդութիւններ :

Կենդանի լեզուներ (2-ական ժամ)

Իւրաքանչիւր վարժապետանոցի մէջ կ'ուսուցուի մէկ լեզու միայն : Լեզուի ընտրութիւնը եղած է վարժապետանոցներու աշխարհագրական գիրքին համաձայն, այսինքն այն վարժապետանոցները, որ կը գտնուին Կերմանական սահմանազխին մօտ, այնտեղերը կ'ուսուցուի գերմաներէն լեզու. այնպէս որ գրեթէ բոլոր գլխաւոր կենդանի լեզուները—անգղիերէն, իտալերէն, սպանիերէն եւն. —բաժնուած են վարժապետանոցներու մէջ :

Լեզուի ուսուցումին մէջ, գասատուն մեծ հոգ կը տանի խօսակցութեան, որով սպազայ գաստիարակներու պէտք է թարգման լինին ֆրանսացի գիւղացիներու եւ դրացի օտար ազգերու մէջ :

Երկրագործութիւն (մէկ ժամ, ա. եւ Բ. տարիներուն մէջ միայն) Մշակութիւն. — Կենդանաբուծութիւն եւ գիւղատնտեսութիւն. — Ծառաբուծութիւն եւ անկաբուծութիւն, հակիրճ ծանօթութիւններով :

Գծագրութիւն (4 ժամ բոլոր տարիներու մէջ)

Նմանողական եւ երկրաչափական գծագրութիւն :

Գծագրութեան ուսուցումին տարուած մեծ խնամքը թոյլ պիտի տայ սպազայ գաստիարակներուն, կարենալ պէտք եղած ձեռքի հաստատութիւնը տալ իրենց աշակերտներուն, բան մը՝ որ խիստ կարեւոր է մանկական կեանքի մէջ, ոչ միայն զանոնք հաճոյքով աշխատեցնելու համար,

այլ եւ անոնց ապագային, որ մեծապէս պիտի օգտուի ձեռքի ձկունութեանէ մը :

Ձայնական եւ նուագաւոր Միւզիք
(2-ական ժամ բոլոր տարիներու մէջ)

Մարմնական եւ զինուորական Մարզանք

Ձեռակտն աշխատութիւններ (3-ական ժամ)
Թուղթի եւ կողքի վրայ աշխատութիւններ, ինչպէս նաեւ փայտի եւ երկաթի վրայ : Կաղապարում :

ժամանակացոյց եւ ներքին Վարչութիւն

Գասախօսութիւնները, ամբողջ շաբթուան մէջ, այնպէս կարգադրուած են որ 25 ժամը չեն անցնիր : Գրականութեան նուիրուած է 15 ժամ ա) տարիին՝ 13 ժամ բ) տարիին՝ եւ 12 ժամ գ) տարիին մէջ : Իւրաքանչիւր օր աշակերտին գիւրութիւն տրուած է, առնուազն, 5 ժամ նուիրել իր անձնական աշխատութիւններուն, ընթերցանութեան եւ դասերու պատրաստութեան :

Կիրակի օրերը եւ հինգշաբթի կէսօրէ վերջերը որ եւէ գասախօսութիւն տեղի չունենար : Բ. եւ Գ. կարգերու աշակերտները դասարանի կամ ֆունկտաններու մէջ յաճախ բերանացի կերպով կրթական վարժութիւններ կ'ընեն : Ուսուցիչին առջեւ՝ դասի մը կամ ընթերցանութեան մը վրայ հաշիւ կուտան, բացատրելով հատուած մը, սրբագրելով հրահանգ մը, պարզաբանելով գասախօսութեան հարց մը կամ իրենց անձնական աշխատութիւններու արդիւնքը :

Գ. կարգի աշակերտները, կարգաւ, գասախօսութիւններ կ'ընեն իրենց գասատուն եւ վարժարանի միւս աշակերտներու ներկայութեան, շաբաթը կէս ժամ : Նիւթը որ եւ է կրթական առարկայ եւ մեթոտ կրնայ լինել, զոր կ'ընարէ աշակերտը կամ գասատուն եւ որ կ'ը վաւերացուի վարժարանի տեսուչին : Այս հրապարակային գասախօսութիւնը տեղի կուտայ զանազան նկատողութիւններու եւ վիճարա-

նութիւններու, որոնք կը լինին ունկնդիր աշակերտներու կողմանէ. օրինակ, կը քննադատեն թէ՛ կրցա՞ւ դասախօս աշակերտը իր նիւթը պէտք եղածին պէս պարզաբանել, թէ՛ իր մեթոտը՝ հիմին ու ձեւին մէջ, յատկութիւններ ու պակասութիւններ չունէ՞ր. թէ՛ իր յայտնած գաղափարները լաւ չզլթայաւորուած էի՞ն. ծրագրի միութիւն կա՞ր. լիզուն ուղիղ է՞ր, եւն, եւն: Այս օգտակար եւ կրթիչ մանկավարժական քննադատականները, եթէ իրենց մէջ որ եւ է սխալանքեր կամ թերութիւններ ունին՝ կ'ուղղուին ընդարձակ եւ հակիրճ բացատրութիւններով տեսուչին կամ դասատուին կողմանէ:

— Այս ուղղութիւնը, որ վարժապետանոցներու ծրագրին մէկ ամենագեղեցիկ մասն է, կրկին օգտակարութիւն ունի. 1, վարժեցնել ապագայ դաստիարակները դասախօսելու, 2, հետաքրքրելու զանոնք նորագոյն մեթոտներու գիւտով մը՝ իրենց դասախօսութեան առարկաները աշակերտներուն լաւապէս մարտելի դարձնելու: Չունինք վարժապետանոցներ, վարժապետներ պատրաստելու համար, սակայն ունինք լաւագոյն դաստիարակութիւն ստացած ուսուցիչ-անօրէններ, որ կրնան յատկացնել շարժական մէկ ժամ, իրենց հսկողութեան տակ եղող վարժարանին խալի ուսուցիչներուն դասախօսելու եղանակ եւ մեթոտ սովորեցնելու: Պատուելիական ծթած մտքերով եւ կարողութեամբ օժտուած տիրացու վարժապետներ տակաւին երկար փամփանակներ գոյութիւն պէտք է ունենան մեր դրպրոցներուն մէջ. անոնց բարերար գեր մը տալու միակ միջոցը կամ զանոնք իրենց պաշտօնին մէջ փոքր ի շատէ օգտակար դարձնելու ճարը՝ իրենց յանձնուած կրթութեան ուսուցումի եղանակ մը սովորեցնելուն մէջ փնտռելու է: —

Վարժապետանոցներու մէջ կրթութիւնը ունի գործնական եւ ուսուցչական յատկանիշ: Դասատուները օրէնքով պարտաւորուած են հակիրճ ըլլալ իրենց դասախօսութիւններու մէջ եւ խոյս տալ ամեն անիմաստ մանրամասնութիւններէ: Աշակերտներու հրահանգները կը սրբապրուին

եւ անոնց նկատողութեան կէտերը կը նշանակուին դասա-
տուին կողմէ, եւ ամեն դասի մէջ հարցաքննութեան եւ
նիւթին ամփոփարար պատմութեան բաւական ժամանակ
նուիրուած է :

Վարժապետանոցի աշակերտները, որ դասատու-աշա-
կերտ (élèves-maîtres) կը կոչուին, կը դասախօսեն առա-
ջին տարիէն սկսած, վարժապետանոցներու մօտակայ
նախնական վարժարանի մը մէջ, որ կը գտնուի միակ դաս-
տիարակ-տեսուչի մը հսկողութիւն տակ :

*
*
*

Վարժապետանոցներու ներքին կարգապահութիւնը բա-
ւականէն աւելի դժուարատանելի է : Ամեն օր աշակերտ-
ները զանգակի մը ձայնով կ'արթնան՝ առաւօտեան ժամը
5 ին, դաստիարակի մը հսկողութեան տակ, որ ննջարա-
նին մօտ իր մասնաւոր խուցը ունի : Կէս ժամի մաքրու-
թեան հոգատարութենէ մը վերջ, աշակերտները կ'իջնեն
ուսումնասրահը (salle d'étude), ուր կ'աշխատին մինչեւ ժամը
7ը : Այդ ժամուն ճաշարան կ'առաջնորդուին, ուր կը խը-
մեն գաւաթ մը սուրճ կամ կաթ (հաց որչափ որ կ'ուզեն)
եւ անմիջապէս յետոյ կը բարձրանան ննջարան, իրենց
անկողինները կարգի բերելու. ու իւրաքաչիւր աշակերտ ու-
րոշ գերով մը, կը մաքրէ վարժարանին որ եւ է դասարանը,
միջնուղին, սրահը, եւայլն : Ժամը 8-ին դասախօսութիւն-
ները կ'սկսին, որ կը տեւեն մինչեւ կէսօր (ժամ 12) : Ճա-
շերնին ընելէ վերջ, որ կը բաղկանայ պնակ մը բուսախաշ
ապուրէ, մսի փոքրիկ կտորէ մը (յաճախ եզան խաշած մի-
սի անհամ պատառ մը) եւ իւղով տապկուած բոյսերու ան-
հուն խառնուրդով մը, աշակերտները կը վերադառնան ըզ-
բօսալալը՝ սպասելով ժամը 1 ին, դասախօսութիւններու
վերսկսելուն : Ժամը 4-ին դասերը կը վերջանան, աշակերտ-
ները անօթեցած են, ու այդ բնական պէտքին զոհացում
տալու համար, ծառային իրենց ներկայացուցած կողովէն
մէկ մէկ հացի կտոր կը խլին, ու կրծելով կը թափառին՝

բակը, պարտէզին մէջ, պատերու վրայ ? : Ժամը 5 ին Ուսումնասիրան կը մտնեն, ուր հսկիչ դասատուին ներկայութեան պէտք է պատրաստեն շարադրութիւն մը, մինչև ժամը 7ը :

— Իւրաքանչիւր դասատու իր կարգին ամեն օր ժամը 5 էն 7 կը հսկէ աշակերտներու վրայ, այդ պահուն վարժապետանոցի երեք կարգերը, դասատուին ճիւղին համեմատ եւ անոր ընտրած նիւթին վրայ՝ գիտական կամ գրական շարադրութիւն մը կ'ընեն : Իսասատուն մանրակրկիտ աչքէ կ'անցնէ, այդ պահուն, թէ աշակերտը գրել սկսելէ առաջ, յատակագիծ մը պատրաստած է՝ շարագրելի նիւհամար, եթէ տեսնէ որ այդ պարտաւորութիւնը թերի է, անմիջապէս աշակերտին շարագրութեան թուղթը կը պատռէ ու նոթը զէքօ կուտայ : Երբ ժամը 7ը կը հնչէ՝ այդ գրուած շարագրութիւնները (compositions) կը հաւաքէ, ու քանի մ'օր վերջ դասախօսութեան պահուն զանոնք սրբագրած՝ կը վերագարձնէ : Մասնաւորապէս հեղինակելու շարագրութիւնը իրեն նուիրուած մասնաւոր ժամ մը ունի շարթուան մէջ, ուր գրականութեան դասատուն՝ վերը յիշուած պայմաններու մէջ կատարուած պարտականութիւնները աշակերտներուն յանձնելէ առաջ, անոնց իւրաքանչիւրին վրայ իր մասնաւոր նկատողութիւնները կ'ընէ, կը քննադատէ յատակագիծը, հիմը եւ ձեւը վերջապէս, ու գրտաախտակին վրայ տիպար յատակագիծ մը կը պատրաստէ, աշակերտներուն թելադրելով այդ յատակագիծի իւրաքանչիւր մասին ընդհանուր եւ մասնաւոր դադափարներու գիւտը : Կրթութեան մեթոտ մը որ զեղեցիկ է եւ օրինակելի : —

Երեկոյեան ժամը 7-8 աշակերտները կը հանդէսին կամ ընթերցանութեամբ կամ մարմնամարզով եւ կամ ուրիշ որ եւ է թեթեւ զբաղումով : 8 ին ընթրիքնին կ'ընեն, — մտի կտոր մը, բանջարեղէն եւ պտուղ (տանձ մը, խնձոր մը միայն) : Ժամը 9 ին ննջարան կը բարձրանան՝ առաւօտուն 5 ին արթննայու եւ նախորդ օրուան կրկնութիւնն սկսելու :

Հինգշաբթի օրուան կէս օրի արձակուրդը յատկացուած


է բուսահաւաքական պտոյտներու կամ դործարաններու ագրիւլուիւեան, վերջապէս գիտական զարգացումի մը :

Դիսոյողոսքիւն . — Մանկավարժական տեսակէտով վարժապետանոցները Ֆրանսայի լուսագոյն պարոցները կարելի է համարել : Անոնք են որ կը պատրաստեն նախնական կրթութիւնն ուսուցիչ-դաստիարակները . անոնք են որ կը հայթայթեն Ֆրանսացի մանուկներու ծաղիկ տարիքին զնկավարիչները : Մտաւորական զարգացումը հուժկու սովորներէն մ'ունի Ֆրանսայի երիտասարդութեան մէջ, բայց այդ հաստատուն հիմը չունի բարոյական դաստիարակութիւնը : Ասոր պատճառը բաւականէն աւելի պարզ է . որովհետեւ նախնական կրթութեան վարիչ մարմինները, վարժապետանոցի շրջանաւարտները, թոյլ են իրենց կարգին բարոյական դաստիարակութեամբ : Ի՞նչու այս պակասութիւնը, գուցէ հարցուն չատեր . — չպիտի մատնանիչ ընեմ այն կէտը թէ վարժապետանոցները գիշերօթիկ են, պարագայ մը՝ որ երիտասարդ ուսուցիչներու բարոյական դաստիարակութեան ու ընկերական զարգացումին չարաչար կը վնասէ, այլ պիտի ծանրանամ նախ այն կէտին վրայ թէ վարժապետանոցները ձրի լինելով հոն չափէն աւելի խստութիւն կայ աշակերտ-ուսուցիչներու վրայ իրենց դրոցական շրջանին մէջ . բռնապատուած լինելով մեքենական աշխատութեան մը եւ թութակաբար զարգացումի մը, ինչ որ կը ջնջէ անոնց մէջ անկախութեան ոգին, կը նուաստացնէ հոգեկան կարողութիւնները եւ զանոնք կ'ստրկացնէ . երկրորդ կրթական ծրագիրի չափազանց բեռնաւորում մը կը խլէ աշակերտէն ամեն գիւրութիւն բնական ընդունակութիւններու յագուրդ սուլով՝ որ եւ իցէ հոգեկան գոհացում ունենալու . վտանգաւոր է այս բանը, որովհետեւ սաղմին մէջ կ'սպաննէ անոր ձեռներեցութեան ոգին, ու զայն գերի կը դարձնէ վարժարանին մէջ ստացած յաճախ արուեստակեալ ծանօթութիւններու : Այս պայմաններու

մէջ մնած ապագայ դատախարակ-ուսուցիչը, — պայմանները՝ որ յաճախ, կը շեշտեմ այս կէտը մանաւանդ, պատճառ կը լինին անոր առողջութեան խանգարումին ալ եւ երբեմն նոյն իսկ մահուան, այն ինչ իր ապարեզի մէջ թեւակոխած, — չլինելով բաւականաբար վճարուած, իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ ալ զրկուած կը մնայ շատ մը միջոցներէ՝ որ կրնային իր մէջ՝ մտաւոր զարգացումին հետ՝ բարոյական բեղուն միաքը բողբոջել եւ ծագկեցնել :

Վարժապետանոցները, եւս անտարակոյս, իրենց կազմակերպութեան այս տկարութեամբ մեծ բաժին մը ունին՝ այն բարոյական անկումին մէջ զոր այսօր այնքան դառնութեամբ կ'ըզգայ Փրանսան եւ որուն գէժ պէտք ունի ուժգինօրէն կոուելու :

ՈՒՍԱՆՈՂ



ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

Գ Ե Բ Ա Գ Ո Յ Ն Հ Ա Ճ Ո Յ Ք Ը

(Շար. 5-6 թիւերէն)

Սենեակին մէջ վայրկեան մը լսութիւն տիրեց :

Ունկնդիր երիտասարդները բոլորովին աչք ու ականջ եղած, անձայն ու անշարժ կը դիտէին Փրօֆ. Վարպետեանը, որուն զէմքը երազուն արտայայտութիւն մը ստացած էր : Անոր աչքերը, որ վայրկեանի մը մէջ կորսնցուցած էին իրենց բնական փայլը, անորոշ կէտի մը վրայ սևեռուն, կարծես փնտռել ուզէին վաղուց արդէն ծանօթ բան մը, որ յանկարծ մոռացութեան մշուշներու մէջ անյայտացած էր : Ու իր միտքը անծանօթ ու խորհրդաւոր իրերու հետամուտ, բոլորովին խորասոյզ կը թուէր լինել կնճռոտ խնդիրներու մէջ, որոնք իրենց անհասկնալիութեան մէջ մարդկային սկար միտքը կը հեզնեն :

Քանի մը վայրկեան այս վիճակին մէջ մնալէ յետոյ, խորունկ բայց խուլ հառաչանք մը պոռթկաց փրօֆէսէօրին կուրծքին տակ որ միեւնոյն աստն սթաիկցուց զինք իր գրեթէ թմրած վիճակէն :

Յանցաւորի մը պէս ամօթահար, անմիջապէս ինքզինքը ժողվեց ու իր ունկնդիրներէն ներողութիւն խընրելէ վերջ, սկսաւ շարունակել :

Սիրելի բարեկամներս, մեր առաջ բերած բոլոր ցուցուցներէն պարզապէս կը հետեւի՝ թէ երջանկութիւնը իրականութեան մէջ երազ մըն է, արդիւնք սնտախ ու անիմաստ յոյսերու, զոր հասարակութեան միտքին մէջ շարունակ ամբապնդել կը ջանան (չահագիտօրէն անշուշտ) կրօններու ներկայացուցիչներն ու ջատագով սպասաւորները:

Այս վերջին կէտին վրայ կ'ուզէի ընդարձակօրէն խօսիլ, պարզաբանելու համար կարգ մը թաքուն նպատակներ, որոնք մղում կուտան կղերականներուն (ընդհանուր խմատով) ռամիկին հետ այդ տեսակ լեզու գործածելու: Այդ մեկնաբանութիւնը նոյն իսկ անհրաժեշտ էր, այն պատճառով որ այս խնդիրին մէջ մեզի գէմ առարկութիւնը ընդներու ստուար խումբ մը գոյութիւն ունի, որ՝ եթէ ոչ բացէ ի բաց՝ անկիւններու մէջ մեզի գէմ թաքուն քարտէսներն ընելէ չի դադրիր: Սակայն, բուն նիւթէն չհեղելու համար, ստիպուած եմ ուրիշ անպամուան թողուլ այդ կէտի բացատրութիւնը, — մանսւանդ որ ժամանակս ալ շատ կարճ է, — եւ շարունակել մեր բուն նիւթը:

Ինչ առաջ ըսինք թէ երջանկութիւնը ցնորք է իրական աշխարհին մէջ: Այդ բանին ճշմարտութիւնը գիտական աչքերով հաստատելէ վերջ, վայրկեան մը սարսափով կանգ կ'առնենք մարդկութեան մ'առջեւ, որ կ'աշխատի, կը յողնի, կը շարչրկուի, արիւն-արցունք կը թափէ, ու կարծես մեր երակներուն արիւնը ջուր կը կարի. բայց երբ աւելի մօտէն կը ծանօթանանք այդ մարդկութեան, եւ կը քննենք ամենէն մութ խաւերը, կը տեսնենք որ անոր իւրաքանչիւր անհատան իրեն համար ստեղծած է տեսակ մը երջանկութիւն, որ երբեմն հոգեկան զգլխուժով մը մոռցնել կուտայ անհատին, գոնէ կարճ ժամանակի մը համար, աշխարհային ցաւերն ու մտահոգութիւնները, վիշտերն ու տառապանքը, եւ կը բարձրացնէ զայն անպատմելի երանութիւններու բարձունքը:

Այս առթիով տեղն է յիշել Վոլթէրի սրամիտ մէկ գաղափարը՝ «Il n'y a pas de bonheur, il n'y a que des petits bonheurs. — Երջանկութիւն չկայ, փոքրիկ երջանկութիւն»

ներ միայն կան : » Արդեօք սերտ յարաբերութիւն մը չէ՞ք տեսներ այս գաղափարին եւ մեր պարզած ուսումնասիրութեան մէջ :

Ունկնդիրները գլուխով հաւանութեան նշան ըրին , ու փրօֆէսէօրը շարունակեց .

Ուրեմն խնդիր է գիտնալ՝ թէ ինչ է այդ « երջանկութիւն » բառին սահմանը :

— Պատասխանը փնտռելէ առաջ , չփոթութեան տեղի չտալու համար , փոխանակ երջանկութիւն բառին , որ այստեղ բոլորովին տարբեր իմաստ մ'ունի , կարծեմ թէ լաւագոյն պիտի լինէր գործածել զերագոյն հաճոյք բանաձեւը , աւելի ճիշդ կերպով բացատրելու համար մեր ուսումնասիրութեան նիւթ եղող գաղափարը :

Ունկնդիրներէն կատակարար կերտատարդ մը խօսքը իր ընկերներուն ուղղելով .

— Յարգելի փրօֆէսէօրին բացատրութիւնը հիանալի է , որովհետեւ խնդիրը ոչ մէկ կերպով առնչութիւն չունի երազուած երջանկութեան հետ . ու վօլթէն միամտօրէն չէ որ կը գործածէ « petits bonheurs » բառերը :

Փրօֆ . Վարպետան քթին տակէն խնդաց , ու ներկաներուն վրայ աչք մը պատցնելէ վերջ շարունակեց .

— Իսկապէս բառերը չեն որ մեզի կը զբաղեցնեն . բայց լաւ բացատրութիւն մը միշտ իր որոշ օգտակարութիւնն ունի խնդիրները դիւրութեամբ պարզաբանելու համար : Այսպէս , զերագոյն հաճոյքի սահմանը բնականօրէն պարզ ու որոշ է : — Անհատի մը ամենէն աւելի շատ սիրած , աւելի շատ բաղձացած բանին իրագործումը անոր զերագոյն հաճոյքն է : Այդ հաճոյքը աւելի կամ նուազ տեսական է նայելով թէ ինչ բանի մէջ կը կայանայ : Ու պէտք չէ մոռնալ որ ամէն անհատ տարբեր ձգտումներ ու տարբեր բաղձանքներ ունի . հետեւաբար երազած զերագոյն հաճոյքն ալ անհատին համեմատ կը փոխուի :

Այս մասին փոխանակ չոր օրինակներ մէջ բերելու , եւ թէ թոյլ կուտայ , ձեզի կ'ուզեմ պատմել իրական պատմութիւն մը , որ իր մէջ կը պարունակէ Գերագոյն Հաճոյք

քի ամբողջ հոգեբանութիւնը :

Երիտասարդները միաբերան բացազանչեցին .

Պատմեցէք, պատմեցէք, շատ սիրով մտիկ կ'ընենք . . .

Ասկից քսան եւ հինգ տարի առաջ, սկսաւ խօսիլ փրօֆ. Վարպետեան, տակաւին զսլորոցական գրասեղանի վրայ, մտերմութիւն հաստատած էի մասնաւորապէս ընկերներէս մէկին հետ, որ իր քանի մը լաւ յատկութիւններով մեծ համակրութիւն ներշնչած էր ինձ : Բնաւորութեամբ խիստ բարի ու սրտով անկեղծ, կարելի է ըսել թէ իր բոլոր ընկերներէն ալ հաւասարապէս սիրուած էր ան . սակայն ընկերներն իբրեւ թէ իր վրայ տեսակ մը թերութիւն նկատած լինելով, անոնցմէ չարածինները սովորութիւն ունէին անոր հետ կատակելու : Ահա ամբողջ թերութիւնը, զոր՝ ըստ իս՝ պէտք էր կոչել միտքի անկախ ներհունութիւն : Արտաւազդ, այս էր սիրելի ընկերոջս անունը, մեծ քանակութեամբ գիրք կարգացած էր արդէն՝ կը ճանչնար բոլոր ծանօթ հեղինակներու գործերը, ու շարունակ միեւնոյն սենյով համակուած՝ հետամուտ էր կարգաւոր՝ զգրոցին մէջ, զսլորոցէն գուրս, նոյն իսկ երբեմն իր չսիրած մէկ դասախօսութեան մը շոյին, ու յետոյ սովորութիւն ունէր իր կարգացած գործերու վրայ քննադատական տեսութիւններ ընել : Ինչպէս կ'երեւի, իր յայտնած կարծիքները շատ արգամ տարօրինակ կը թուէին իր ընկերներուն, այն աստիճան տարօրինակ, որ օր մըն ալ իր անունը կը կնքեն « Տարօրինակ » :

Արտաւազդ սկիզբէն սաստիկ վերաւորուած էր այդ անախորժ մակդիրէն, ու յուզուած ինձ մտաւ եկաւ, իր վիշաք յայտնելու : — Բարեկամ, ըսի իրեն, ընկերներուդ ըսածը բացարձակ ազայութիւն է, արդիւնք տգիտութեան ու քիչ մըն ալ հախանձի . եթէ քու կարծիքներդ տարօրինակ կը դառնն ըսել է թէ չեն հասկնար դանոնք : Ուստի քեզի կը մնայ քմծ իծալով ու արհամահանքով միայն պատասխանել անոնց սզելոյ կատակարանութիւններուն, ու քու գործդ շարունակել : Այդ վայրկեանէն Արտաւազդ սիրտով ու հոգիով կապուած էր ինձ անբամանելիօրէն :

Երբ դպրոցական շրջանը աւարտեցինք ու իրարմէ բաժնուելու ժամանակը հասաւ, Արտաւազը լաւով վիզս պլլուեցաւ ու զիս համուրելով ըսաւ. — սիրելի Վարպետ, չես գիտեր թէ մեր բաժանումը որ'չափ ցաւ կը պատճառէ ինձ : Ո՛վ կը մտածէ թէ դպրոցական կեանքը այսչափ շուտ պիտի վերջանար : Գոնէ մխիթարութիւն մ'ունիմ որ դու Եւրոպա պիտի երթաս ուսումը շարունակելու համար : Ես չեմ գիտեր թէ ինչ պիտի ընես : Մնաս բարով, այսուհետեւ գուցէ ա՛լ չտեսնենք զիրար. բայց վստահ եղիր, սիրելի Վարպետ որ քու յիշատակդ միշտ անջինջ պիտի մնայ իմ մէջս . . .

Դուն ալ վստահ եղիր իմ մասիս, սիրելի Արտաւազ, մրմնջեցի յուզուած :

Ու մեկնեցանք :

* * *

Փրօֆ. Վարպետեան կանգ առաւ. ձեռքը ձակաարին վրայէն անցուց ու մտածկոտ կերպով մը շարունակեց :

— Անցած օր թաղական խորհուրդի կողմէն անսպասելի կերպով նամակ մը ստացայ՝ որով հրաուիրուած էի անպատճառ ներկայ գտնուիլ՝ Արտաւազի աւագ սարկաւազի քահանայական սուրբ օծութեան հանգէսին : Կը խոստովանիմ թէ կեանքիս մէջ առաջին անգամն էր որ այդ տեսակ հըրաւէր մը կը ստանայի, ու երբէք առիթ չէի ունեցած քահանայի ձեռնադրութիւն տեսնելու. ուստի՝ հետաքրքրութենէ մղուած՝ որոշուած ժամուն եկեղեցի գացի . . .

— Կարծեմ նորընծայ քահանան Չաւէն անունով մկերատուած է, ընհատեց երիտասարդ մը :

— Այո՛, պատասխանեց փրօֆ. Վարպետեան, ներկայ էիք ձեռնադրութեան հանգէսին :

— Դժբաղարար ոչ . . .

— Ես ներկայ էի, ըսաւ ուրիշ մը, խուռն բաղմութիւն կար. բայց հակառակ այդ բանին՝ հեռուէն ձեզի նըմարելով մօտեցայ . . .

— Ի՞նչու համար քովս չեկաք...

— Շիտակը խօսելով, այդ օրը բոլորովին արտաքոյ կարգի վիճակի մը մէջ գտայ ձեզ... սաստիկ յուզուած կ'երեւէիք, ու չափազանց անհամբեր շարժումներ կ'ընէիք... Թէեւ շատ կը փափաքէի ձեր քով գալ, բայց չհամարձակեցայ՝ վախնալով որ գուցէ ձեր մենութիւնը խանգարեմ...

— Սիրելի բարեկամս շատ սուր ու վննող աչք ունիք, ըսաւ փրօֆէսէօրը՝ քիչ մը կարմրելով, ի՞նչպէս կ'ուզէիք որ անհամբեր չլինէի... քահանայացուն իմ թանկագին ընկերս, Արտաւազգն էր, զոր քսան եւ հինգ տարիէ ի վեր չէի տեսած եւ երբեք ալ տեսնալու յոյս չունէի...

— Ձեր ընկեր... Արտաւա՛զը... միաբերան գոչեցին ունկնդիրները:

— Այո՛, ինքը: Առաջին անգամ նորընծան տեսնելու՝ դէմքը ծանօթ թուեցաւ ինձ, բայց չկրցայ անմիջապէս ճանչնալ թէ ով է, ու սկսայ միտքիս մէջ փնտոսել...: Քիչ վերջ, սովորութեան համեմատ, երբ ժողովուրդին զարցաւ «Խաղաղութիւն ամենեցուն» ըսելու, ճանչցայ զինքը, եւ ցնծութենէս ա՛յնքան ինքզինքս մոռցած էի՝ որ քիչ մնաց եկեղեցիին մէջ «Արտաւա՛զ» պրոպայի...

Փրօֆէսէօրը լսեց ու իր սրածայր մօրուքը ձեռքին մէջ առած սկսաւ խորհիլ, կարծես իր պատմութեան թեւը չիխալցնելու համար: Վայրկեան մը վերջ յարեց.

— Երբ եկեղեցական արարողութիւնն աւարտեցաւ, անմիջապէս փութացի դէպի նորընծային խուցը՝ սիրելի ընկերս ազատօրէն համբուրելու եւ անոր հետ երկարօրէն տեսակցելու յուսով. սակայն յուսախաբութիւն... արդէն անագին բազմութիւն մը հոն հաւաքուած՝ անոր կը սպասէր՝ շնորհաւորելու համար: Քիչ վերջ Տէր Զաւէն ներս մտաւ խուցէն՝ նոր խումբով մ'ընկերացած, աջնպէս որ խուցին մէջ, որ եկեղեցիին ամենէն մեծ հիւրասենեակին էր, ռաք կոխելու տեղ չէր մնացած: Բաւական ժամանակ սպասելէ վերջ, տեսայ որ բազմութիւնը դեռ չուտով ցրուելու երկուցթը չունի, ուստի, ճարտատ, հազիւ թէ անցք մը գտայ իրեն մօտենալու: Պաշտօնական քանի մը շնորհաւ-

ւորական բառեր արտասանելէ վերջ, Տէր Զաւէնի ձեռքը բռնեցի ու մէկուսի՝ ցած ձայնով մ'ըսի. «Տէր հայր, կ'ուզեմ առանձին տեսակցիլ ձեզ հետ:» — Եոյնպէս եւ ես, բնաւ նորընծան, սակայն, սիրելիս, կ'երեւի թէ այսօր զիս հանգիստ չպիտի թողուն, թէեւ չափազանց յոգնած եմ, ուստի վաղը կը տեսնուինք, եթէ ժամանակ ունիք» — «Այո՛, ուրեմն վաղը ես կը գտնեմ ձեզ: Յետու թիւն:»

Յաջորդ օրը մեր որոշումին համամատ գնացի զինքը տեսնելու: Իր անձնական փոքրիկ խուցին մէջ մենացած սաղմոս կը կարգար: Երբ իմ ներկայութիւնս նշմարեց, ձեռքի գիրքը մէկ կողմ դրաւ, եւ ուրախ սիրտով դիմաւորեց զիս...

— Վա՛րպեա... .

— Արտա՛ւազդ...

Ու իրարու վիզ փաթթուելով սկսանք համբուրել զիրար:

— Ա՛խ, սիրելի Վարպետս, մրմնջեց ընկերս, չես գիտեր թէ ո՛րքան ուրախ եմ քեզ տեսնելու. քսան եւ հինգ երկար տարիներու մէջ քաջած բոլոր սառապանքներս այս վայրկեանիս կարծես օդը ցնդեցան անհետ, եւ ինձ կը թուի թէ բնաւ իրարմէ բաժնուած չէինք...

Իսկ իմ ցնծութիւնս մի՛ հարցներ. երէկ երբ եկեղեցիին մէջ քեզի տեսայ, ուրախութենէս ինքզինքս մոռցած, քիչ մնաց որ «Արտաւազդ» պոռայի... Բայց կէտ մը կայ որ ինձի անբացատրելի կը մնայ. անշուշտ ձեռնադրութեան օրը չէր որ քաղաք հասար: Ո՞րչափ ժամանակէ իվիր հոս ես... եւ ի՞նչպէս չմտածեցիր զալ զին տեսնելու...

— Սիրելի Վարպետս, մէկ ամիսէ աւելի է որ ես այս քաղաքին մէջ կը գտուիմ, եւ քանի մը անգամ ալ քեզի հեռուէն տեսնելու բարեբախտութիւնն ունեցած եմ. սակայն ներքէ որ՝ հակառակ իմ կամքիս՝ ստիպուած էի անյայտ մնալ:

— Բայց այդ քահանայութիւնն ով՞ դրաւ գլուխիդ մէջ: Եթէ դուն իմ ճանչցած Արտաւազդն ես, որուն բոլոր կարծիքներուն ու սկզբունքներուն տեղեակ եմ եւ որուն մին-

չեւ հոգիին խորը ծանօթ է ինձ, եթէ դուն դպրոցի «Տա-
րօրինակն» ես (ներէ բացատրութեանս), քու միտքէդ իսկ
չէր կարող անցնիլ այդ գաղափարը...

— Վարպետեան, դպրոցի մէջ ունեցած սկզբունքներէս
մազ մը փոխուած չէ: Սակայն քսան եւ հինգ տարուան
պատմութիւն մ'ունիմ իմ ետեւ: Երբ այդ պատմութեան
հետ ծանօթանաս... ու պէտք է որ ծանօթանաս, իբրև
հոգեբան իմաստասէր, այն բոլոր հոգեբանական վիճակները,
որոնցմէ ես անցած եմ, ամենապարզ կերպով պիտի բացա-
տրեն քահանայանալուս պատճառներն ու նպատակը:

— Ես ալ շատ հետաքրքիր էի արդէն այդ պատմու-
թիւնը լսելու...

(Շարունակութիւնը միւս անգամ)

ՅՈՎՀ. ՇԱՒԱՐՇ

Վ Ե Ր Ջ Ա Լ Ո Յ Ս

Նուազ շողերն արեգակին իրիկուան՝
Դեռ ակամայ բաժնըւելու գաշտերէն ,
Գունեան ծաղկանց հեռ գլխիկոր կը սըզան :
Ոմանք խոնջած , այլք խորշումած , ազազուն
Տըխուր դէմքով օրուան մահը կը դիտեն ,
Իրենց կսկիծն գողցես պատմեն շողերուն ,
Մեղմ շողերուն արեգակին իրիկուան :

Անշո՛ւք , խոկուն ծառերու մէջ ցան ու ցիր
կը տեսնըւին հանպչած թռչունք երգեցիկ՝
Որ կը դիտեն արեւմուտքի բոցն անծիր . . .
Եւ անտովոր նըւագներով միաբան՝
Մի եղերերդ հիւսեն տըխո՛ւր , ազդեցի՛կ :
Արեգակին հըրածե՛լ շան է որ կ'ողբան ,
Անշուք , խոկուն ծառերու մէջ ցան ու ցիր :

Հորիզոնին վըրայ ամպերն սեւադէմ ,
Տրամութեամբ հոծ ու սարսափով մը գեղուն ,
Կեցած անշարժ՝ կարմըրագոյն արփուոյն դէմ՝
Կարծես կ'ուզեն անոր մեկնումն յապաղել՝
Ու կը գողնան իր շողերէն բեկբեկուն ,
Ոսկի շողով սեւ կուրծքերնին զարդարել՝
Հորիզոնին վըրայ ամպերն սեւադէմ :

Գ. Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ՄԻՐՏԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ի՞նչպէս պէտք է մտքին մէջ պատկերել այն բնախօսական մեքենակաճութիւնը, որով սիրտը կը կապուի մեր զգացումներու արտայայտութեան հետ :

Գիտենք որ այդ գործարանը կրնայ ընդունիլ մեր մէջ անցող դարձող բոլոր զգայնիկ թրթռումներու հակահարուածը, եւ թէ այդ բանէն կարող է ծագիլ երբեմն ոյժ-դին գաղարում մը՝ ընկերացած շրջանառութեան ընդհատումին եւ դադարումին, եթէ սպաւորութիւնը խիստ զօրաւոր եղած է, երբեմն ալ թեթեւ գաղարում մը՝ ընկերացած սիրտի բարախումներու թիւին եւ ուժովութեան աւելնալուն եւ հակազդեցութեան, եթէ սպաւորութիւնը թեթեւ կամ մեղմ եղած է . յայց ի՞նչպէս այս վիճակին կարող է հետեւիլ մեր զգացումներու արտայայտութիւնը :

(*) Այս խորագիրին առկ երբեմն պիտի հրատարակենք մեծ գիտնականներու հակիրճ գրութիւնները, որոնք ոչ միայն հաճոյքով կը կարգացունին այլեւ զարգացումի տեսակէտով, իրենց անտրակելի օգտակարութիւններն ունին :

Յիշենք որ սիրտը երբէք չի գազրիր հնչող ջրհան մը լինելէ, այսինքն շարժիչ (moteur) մը, որ կը բաժնէ կենսական հեղուկը մարմինին բոլոր գործարաններուն: Եթէ կենայ, անխուսաբար գործարաններու կենսական հեղուկին ժամանումին մէջ ընդհատում կամ նուազում կը պատահի, ու բնականաբար ընդհատում կամ տկարացում իրենց գործառնութեան մէջ. թէ ընդհակառակը սիրտի թեթեւ դադարումը (arrêt) իր ազդեցութեան մէջ աւելի մեծ ոյժփնութիւն մը իրեն հետեւանք ունենայ, կենսական հեղուկին գործարաններու բաժանումը աւելի մեծ քանակութեամբ կը պատահի եւ հետեւաբար իրենց գործառնութեան մէջ արատաւոր վերադրգում մը կ'առաջանայ:

Սակայն մարմինին բոլոր գործարանները եւ բոլոր գործարանաւոր գնդերները հաւասարապէս զգայուն չեն շնչերակային շրջանառութեան այս թրթռումներուն, որոնք կրնան անոնց ընդունած սնուցիչ հեղուկին քանակը յանկարծօրէն աւելցնել կամ պակսեցնել: Ջրային գործարանները եւ մանաւանդ ուղեղը, որոնք կը ներկայացնեն բնաստական ամենէ բարձր եւ ամենէ փափուկ կազմութիւն ունեցող գործիւն, սուաջինն կ'ստանան շրջանառութեան խտնաբառններուն ապաւորութիւնները: Ասիկա ընդհանուր օրէնք մ'է, բոլոր կենդանիներու համար, գորտէն մինչեւ մարդը. արեան շրջանառութեան ընդհատումը նախ եւ առաջ տեղի կուտայ ջրային եւ ուղեղային գործառնութիւններու կորուստին, ինչպէս որ շրջանառութեան չափազանցումը կը բորբոքէ՝ առաջինն՝ ուղեղային եւ ջրային արտայայտութիւնները:

Սակայն եւ այնպէս շրջանառական փոփոխումներու այս հակազդեցութիւնները, ջրային գործարաններու վրայ ներգործելու համար, խիստ տարբեր ժամանակներ կը պահանջեն, տեսակներու համաձայն:

Պազ արիւն ունեցող կենդանիներու համար, այդ ժամանակը խիստ երկար է, մանաւանդ ձմեռը. գորտ մը երկար ժամեր կրնայ մնալ առանց զգալու իր շրջանառութեան գազարումին հետեւանքները. կարելի է իր սիրտը հանել

և չորս կամ հինգ ժամ տակաւին ան կը ցատքէ եւ կը լողայ առանց իր կամքին եւ շարժումներուն որ եւ է կերպ տկարանալը կամ խանգարուիլը երեւնալու :

Տաք արիւն կենդանիներու համար այս բանը բոլորովին տարբեր է : Սիրտի գործողութեան դադարումը անմիջապէս ուղեղային երեւոյթներու անհետացումին պատճառ կը դառնայ, եւ այնքան աւելի դիւրութեամբ որքան կենդանին բարձր դասակարգի կը վերաբերի, այսինքն ունի ջղային աւելի փափուկ գործարաններ :

Տրամաբանութիւնը եւ փորձառութիւնը մեզի ցոյց կուտան որ, այս պարագային եւս, մարդուն պէտք է առաջին տեղը տալ : Անոր ուղեղը այնքան փափուկ է որ քանի մը երկվայրկեանի մէջ եւ նոյն իսկ անմիջապէս, կը զգայ շրջանառութեան կեդրոնական գործարանին վրայ ներգործող ջղային ազդեցութիւններու տպաւորութիւնը, ազդեցութիւններ՝ որ կը թարգմանուին, ինչպէս որ քիչ վերջը պիտի տեսնենք, երբեմն յուզումով մը, երբեմն թալուկով մը :

Բնախօսական երեւոյթները ինքնուրոյն օրէնքի մը կը հետեւին ամեն տեղ, բայց կենդանի գործարանաւորութեան առաւել կամ նուազ փափուկ վիճակը կրնայ անոնց տալ բոլորովին տարբեր արտայայտութիւն մը : Այսպէս սիրտին հակազդեցիկ օրէնքը, որով կը գործէ ուշեղին վրայ, միւս կողմն է մարդուն եւ զորտին մէջ. սակայն երբէք զորտը կարող չի պիտի լինի զգալ ոչ յուզում մը եւ ոչ ալ թալուկ մը, որովհետեւ ժամանակը որ հարկաւոր է իր սրտին՝ զգալու համար ջղային ներգործութիւնը, ինչպէս նաեւ իր ուղեղին՝ տպաւորուելու համար շրջանառական ազդեցութիւնէն, այնքան երկար է որ երկու գործարաններու բնախօսական յարաբերութիւնը կ'անհետանայ :

Մարդուն մէջ, սիրտին ազդեցութիւնը ուղեղին վրայ՝ երեւան կուգայ երկու գլխաւոր վիճակներով, որոնց միջեւ կարելի է ենթադրել ուրիշ բաղմամբիւ վիճակներ, քաշուկը եւ յուզումը :

Թալուկը հետեւանք է՝ շնչերակային արիւնի ուղեղին ժամանակին չհասնելով՝ ուղեղային գործառնութիւններու

վայրկենական դադարումին :

Կարելի է թալուկ առաջ բերել կապելով կամ սեղմելով ուղղակի այն բոլոր շնչերակները որոնք դէպի ուղեղը կ'երթան . բայց մենք հոս կը խօսինք մխմխայն այն թալուկին վրայ որ կը ծագի սիրտին վրայ զգայուն եւ բաւական զօրաւոր ազդեցութենէ մը՝ անոր շարժումները կեցնելու կարող : Աիրտին կանգնումը , որ ինքզինք կորսնցնելու տեղի կուտայ՝ ուղեղը արիւնէ զրկելով , դիմագծութիւնը կը գունատէ եւ պատճառ կը լինի ուրիշ կարգ մը երկրորդական երեւոյթներու , որոնց վրայ տեղը չէ խօսիլ : Բոլոր զգայնիկ զօրաւոր եւ յանկարծական սպաւորութիւնները կարող են թալուկ առաջացնել , ինչ որ ալ լինի իրենց բնոյթը : Զգայական ջիղերու վրայ ֆիզիքական կամ բարոյական սպաւորութիւնները , վշտալի կամ հեշտասէր զգացողութիւնները միեւնոյն արդիւքին կ'առաջնորդեն եւ սիրտին կանգ առնելուն պատճառ կը դառնան :

Թալուկի տեւողութիւնը բնականօրէն կապուած է սիրտի կանգնումի տեւողութեան : Որքան կանգնումը տեւական է , այնքան ընդհանրապէս , թալուկը կ'երկարի եւ նոյնքան դժուարօրէն կը հաստատուն սիրտի բարխումները , որ նախ կը սկսին անկանոն կերպով եւ հետզհետէ զանգաւորէն կը ստանան իրենց բնական չափը :

Երբեմն սիրտի կանգնումը վերջնական է եւ թալուկը մահացու . սկար եւ միեւնոյն ասեն զգայուն անհատներու վրայ այս բանը կրնայ պատահիլ : Փորձնականապէս հաստատուած է որ , սնունդի պակասութեամբ հիւժած ազանիներու վրայ , բաւական է երբեմն միայն զգացումի ջիղ մը կծմթելով խիստ ցաւի մը տեղի տալ եւ առաջացնել սիրտի վերջնական դադարում մը եւ մահացու թալուկ մը :

Յուզումը միեւնոյն բնախօսական մեքինականութենէն կ'ածանցուի՝ ինչպէս թալուկը , բայց իր արտայայտութեամբ բոլորովին տարբեր է : Թալուկը որ ուղեղին արիւնը կը յափշտակէ , բացասական արտայայտութիւն մը ունի , ապացուցանելով որ ջղային ոյժգին սպաւորութիւն մը ցողացած է սիրտին վրայ՝ անդրադառնալով ուղեղին

զայն զարնելու համար: Յուզումը, ընդհակառակը, որ ուղեղին աւելի գործօն արեան հոսանք մը կը ղրկէ, գրական արտայայտութիւն մը կուտայ, այնպիսի եղանակով մը, որ ուղեղային գործարանը կը ստանայ գործառնական վերազրգում մը, համերաչխ զայն արտադրող ջղային ազդեցութեան բնոյթին հետ: Յուզումին մէջ միշտ սկզբնական տպաւորութիւն մը գոյութիւն ունի, որ իբր թէ յանկարծակիի կը բերէ սիրտը եւ զայն կը կեցնէ թեթեւ կերպով, ու ասոր հետեւանք կը լինի ուղեղային թեթեւ ցնցում մը որ ծնունդ կուտայ վաղանցուկ գունատութեան մը. անմիջապէս սիրտը, խթանով կծուած անասունի մը պէս, կը հակազդէ, կ'արագացնէ իր շարժումները եւ աօրթով (aorte) ու բոլոր շնչերակներով մեծ քանակութեամբ արիւն կը ղրկէ: Ուղեղը՝ գործարաններու ամենազգայունը, կը կրէ անմիջապէս եւ ամենէ առաջ շրջանառութեան փոփոխումին հետեւանքները: Ուղեղը անսարսկոյս մեկնումի կէտն եղած է ջղային զգայական տպաւորութեան. բայց սիրտի շարժիչ ջիղերուն վրայ անդրադարձ (reflex) հակազդումով՝ զգայական ազդեցութիւնը ուղեղին մէջ առաջ բերած է այն պայմանները, որոնք կ'երթան կը կապուին զգացումի արտայայտութեան:

Մէկ խօսքով, մարդուն մէջ, սիրտը սննդական կեանքի ամենէն զգայունն է. ան ամենէ առաջ կ'ստանայ ուղեղային ազդեցութիւնը: Ուղեղը ամենէ զգայունն է կենդանական կեանքի գործարաններուն. ան ամենէ առաջ կը ստանայ արիւնի շրջանառութեան ազդեցութիւնը: Ասկից կը հետեւի որ կենդանի մեքենային այս երկու կարեւոր գործարանները անընդհատ ազդեցիկ եւ հակազդեցիկ յարաբերութեան մէջ են: Այդ վայրկեանէն սիրտն ու ուղեղը ամենատեսքով եւ փոխադարձ գործառնութեան համերաչխութիւն մը ունին. գործառնութիւններ՝ որ կը բաղմապատկուին եւ կը ձուլուին այնքան՝ որքան գործարանաւորութիւնը կատարելագործուած եւ փափուկ է:

Այն զգացողութիւնները, զոր մենք կ'ունենանք, ընկերացած են միշտ սիրտին անդրադարձ հակազդեցութիւններով,

Թէեւ ուղեղը լինի անոնց բացարձակ կեդրոնը : Բարձր գործարանաւորութիւններու մէջ, կեանքը ուրիշ բան չէ բայց եթէ արեւային եւ ջրային գրութիւններու միջեւ յարատեւ փոխանակութիւն մը : Մեր զգացումներու արտաբերութիւնը անգլի կուեննայ ուղեղին եւ սիրտին մէջ փոխանակութեամբ (échange) ՚ր : Այս փոխանակութիւնը կ'իրագործուի կազմարանական խիստ ծանօթ յարաբերութիւններով, փնկեկաւորալի (pneumo-gastrique) ջրղերու միջոցով, որոնք սիրտին կը տանին ջրային ազդեցութիւնները, եւ ֆարօքիս ու ողնային շնչերակներով՝ որ արիւնն ուղեղին կը տանին : Բոլոր այս սքանչելի մեքենականութիւնը թելով մը կարծես կապուած լինի, ու եթէ սիրտը ուղեղին միացնող ջրղերը փճանան, հակազդեցութեան այս փոխադարձութիւնը կ'ընդմիջուի, եւ մեր զգացումներու արտայայտութիւնը խորապէս կը խանգարուի :

Բոլոր այս բացատրութիւնները, պիտի ըսուի ինձ, նիւթապաշտութեան գրոշմ ունին :

Այդ բանին պիտի պատասխանեմ որ հոս խնդիրի առարկայ եղող հարցը ասիկա չէ : Եթէ նիւթիս նպատակէն չեղէի, կրնայի գիւրութեամբ ապացուցանել որ նիւթապաշտութիւնը բնախօսութեանէմէջ՝ որ եւ է կէտի չ'առաջնորդեր եւ ոչինչ կը լուսարանէ . միթէ՞ նուազածութիւն մը նուազ հրապուրիչ կը զանայ, երբ բնագէտը թուաբանօրէն կը հաշուէ անոր թրթռումները : Միթէ՞ բնախօսական երեւոյթ մը նուազ հիանալի կը լինի, երբ բնախօսը կը վերլուծէ անոր բոլոր նիւթական պայմանները : Պէտք է որ այս վերլուծումները, այս հաշիւները կատարուին, որովհետեւ առանց այդ բանին գիտութիւն գոյութիւն չ'ունենար : Արդ բնախօսական գիտութիւնը մեզ կ'ուսուցանէ՞ թէ, մէկ կողմէ, սիրտը կ'ընդունի իրապէս մեր զգացումներու ապաւորութիւնը, եւ թէ, միւս կողմէ, սիրտը կը վերագործէ օժտելու համար ուղեղը այն հարկաւոր պայմաններով, որոնք անհրաժեշտ են այս զգացումներու արտայայտութիւններուն, ուրկից կը հետեւի որ՝ բանասանդծը եւ վիպասանը, մեզ յուզելու համար, մեր սիր-

տերուն կը գիմնն, թէ աշխարհի մարդը, որ ամեն բոպէ կը յայտնէ իր զգացածները՝ սիրտէն ներշնչուելով՝ փոխարեւորութիւններ կը հնարէ, որ կը համապատասխանեն բնասխօսական իրական ճշմարտութիւններու :

Երբեմն բառ մը, յիշատակ մը, զէպօքի մը տեսարանը, կ'արթնցնեն մեր մէջ խորին վիշտ մը : Այս բառը, այս յիշատակը չէին կարող իրենք իրենց ցաւագին ըլլալ, եթէ մեր մէջ տեղի չտային բնասխօսական երեւոյթներու :

Երբ կ'ըսեն թէ սիրտը վիշտէն կոտորած է, ճշմարիտ երեւոյթներ կան հոն, սիրտին մէջ : Սիրտը կեցած է, եթէ ցաւագին ապաւորութիւնը յանկարծակի կերպով եղած է, արիւնը այլեւս չհասնելով ուղեղին, թալուկը, ջրածգութիւններ անոր հետեւանքը եղած են : Ուրեմն մարդ շատ իրաւունք ունի, երբ խնդիր է մէկու մը հաշտութիւն մեր հոգին վրդովող լուրերէն մին, զայն իրեն ծանօթացնել փափկօրէն եւ զգուշութեամբ :

Մեր փորձերով, զոր ըրած ենք սիրտին վրայ, գիտենք թէ աստիճանաւոր գրգռումները կը սկաբացնեն կամ կը ժանդոտեն ֆարսիսիան (cardiaque) գիւրազգացութիւնը՝ բարախուճումներու դարարումին առջեւ առնելով :

Երբ կ'ըսեն թէ մեծ սիրտ է, երկար ստեն տառապանքի մէջ մնալէ եւ դառն յոյզեր կրելէ յետոյ, այս եւս կը համապատասխանէ սիրտի մասնաւոր բնասխօսական հանդամանքներու : Երկարատեւ ցաւագին ապաւորութիւնները, որ անկարող դարձած են սիրտը կեցնելու, զայն կը յոգնեցնեն եւ կ'անճրկեն . կը յապաղեն անոր բարախուճումները, կ'երկարեն Տիասթօլը (սիրտն ու շնչերակները ընդլայնող շարժումը), ու կրել կուտան սրտամօտ մասերուն մէջ յորդումի կամ սեղմապնդումի զգացում մը : Հաճելի ապաւորութիւններն եւս կը համապատասխանեն սիրտի որոշ վիճակներու :

Երբկին մը յանկարծակիի եկած է քաղցր յուզումով մը, այն խօսքերը որ կարողացած են այդ բանին ծնունդ տալ միտքը կայծակի արագութեամբ կտրած անցած են, աւանց հոն կենալու . սիրտը անով համակուած է անմիջապէս, ան-

մեն տրամաբանութիւնէ եւ ամեն մասձողութիւնէ առաջ : Զգացումը հեռզհեռէ կ'արտայայտուի սիրտի թեթեւ դադարումէ մը յետոյ, աննշմարելի ամենքի համար, բաց առած բնախօսը . սիրաը խոցուած ջղային սպաւորութեամբ, կը հակազդէ . կը վերագործէ քրփոստիներով, որ զայն կուրծքին տակ վեր կը ցատկեցնեն եւ բարախել կուտան խիստ զօրաւոր կերպով, միեւնոյն ատեն սիրաը աւելի մեծ քանակութեամբ աբիւն զրկելով ուղեղին, զէմքին աւելի կարմրելուն եւ անոր գիծերուն մասնաւոր արտայայտութիւն մը ունենալուն պատճառ կը լինի, երեսոյթ մը՝ որ կը համապատասխանէ վայելուած քաղցիկ զգացումի մը :

Սերը սիրտը կը բարախի խօսքը ոչ միայն բանաստեղծական ձեւ մ'է, այլ բնախօսական ճշմարտութիւն մը :

Երբ կ'ըսենք մէկու մը թէ գոյ՞ կը սիրենք ի բոլոր սրտի, այդ բանը բնախօսօրէն կը նշանակէ թէ անոր ներկայութիւնը կամ յիշատակը կ'արթնցնէ մեր մէջ ջղային սպաւորութիւն մը որ, հազորգուելով սիրտին փնեռու-կասրիփ ջիւղերով, կը հակազդէ մեր սիրտին՝ այնպիսի փափուկ եւ դանակով մը՝ այնպէս որ մեր ուղեղին մէջ կը ծագի համակրական յուզում մը կամ զգացում մը : Կ'ենթադրեմ հոս, միշտ այն պայմանը՝ թէ սէրը անկեղծ է, առանց ատոր, սիրաւոր ոչինչ պիտի զգար եւ զգացումը միայն շրթունքներու վրայ պոյւթիւն պիտի ունենար : Մարդուն մէջ, ուղեղը, այս զգացումներն արտայայտելու համար, պարտի իրեն ծառայեցնել սիրաը :

Երկու միացած սիրտեր՝ միանուազ բարախող սիրտերն են միեւնոյն ջղային սպաւորութիւններու տակ, ուրկից կը ծագի նման զգացումներու ներգաշնակ արտայայտութիւնը :

Փիլիսոփաները կ'ըսեն թէ կարելի է սիրիկն ճիւղել եւ լռեցնել իրեն կիրքերը : Ասոնք դարձեալ գաղափարներ են, զոր բնախօսը կրնայ բացատրել : Ամեն ոք գիտէ որ մարդ իր կամքով կարող է սեղի տալ շատ անդրադարձ հակազդեցութիւններու որոնք կ'առաջանան Ֆիզիքական պատճառներէ արտադրուած յուզումներով : Տրամաբանութիւնը անտարակոյս կը յաջողի միեւնոյն հեղինակութիւնն ունենալ

բարոյական զգացումներու վրայ: Մարդը կարող է, արամաբանութեամբ, արգիլել անդրադարձ հակազգեցութիւնները սիրտին վրայ, բայց որքան շատ տրամաբանութիւնը յաղթելու պիտի ձգտի, այնքան զգացումը մարելու պիտի նկրտի:

Անդրադարձ հակազգեցութիւնները կանգնեցնելու ատակ ջղային կարողութիւնը ընդհանրապէս նուազ ոյժգին է կնոջ մէջ քան թէ մարդուն. ինչ որ անոր կուսայ գերակշռութիւն Ֆիզիքական եւ բարոյական զգայութեան չըջանակին միջ, ինչ որ դարձեալ մլած է յայտնել թէ կինը առեյի գորովայի սիրտ ունի քան թէ մարդը:

Բայց կանոց կ'առնեմ այս խորհրդածութիւններու մէջ, որ մեզի խիստ հեռուները կրնայ տանել, ու պիտի վերջացնեմ ընդհանուր եզրակացութեամբ մը:

Գիտութիւնը երբէք չի հակառակիր արուեստէն ծագող սկզբունքներու եւ գիտողութիւններու, ու երբէք չպիտի ընդունիմ այնպիսիներու կարծիքը թէ գիտական զրականութիւնը պէտք է սպաննէ ներշնչումը: Արուեստագէտը պիտի գտնէ գիտութեան մէջ հաստատուն հող, ու գիտնականը պիտի քաղէ արուեստին մէջէն փոխադարձաբար ապահով տեսութիւններ: Անտարակոյս կարող են տագնապի չըջաններ գոյութիւն ունենալ, որոնց մէջ գիտութիւնը, խիստ առաջացած եւ միեւնոյն ատեն խիստ անկատար, աւելի անհանգիստ կ'ընէ արթիտող քան թէ անոր կ'օգնէ: Ինչ որ կարող է, ահա, պատահիլ այսօր ընախօսութեամբ փիլիսոփային եւ բանաստեղծին հանդէպ. բայց այդ տեղ գոյութիւն ունի միայն փոխանձական վիճակ մը. ու ես համոզուած եմ որ երբ ընախօսութիւնը բաւական առաջանայ, բանաստեղծը, փիլիսոփան եւ բնախօսը, ամենքն ալ զիրար պիտի հասկնան:

ՔԼՕՏ ՊԵՐՆԱՐ

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍԷՆ ԿՈՐԵՐ

ՍՏՈՐԵՐԿՐԵԱՑ ԱՇԽԱՐՀԸ

Երկրաբանութեան, հնէարանութեան, եւ հանգաբանութեան գլխաւոր հրաշալիքները ներկայացած են Արուեստահանդէսին մէջ՝ երկու տարրեր բաժիններով, 1. Ստորերկրեայ աշխարհը (le Monde Souterrain) եւ 2. Ստորերկրեայ հանքային ծուցադրութիւնը (Exposition minière souterraine) :

Վերջինը հանքերու շահագործութեան արդի մեթոտները եւ աշխատութիւններու վիճակը կը ներկայացնէ. իսկ աւաջինը, որ մեր յօլուածին նիւթը պիտի լինի, բաժնւրւած 16 սրահներու, կը ցուցադրէ հետեւեալները, — Պատկեր մը հանքերու պատմութենէն, անցեալին մէջ. — Հանքի մը շահագործումը Միջին Դարու վերջերը. — Հնախօսական յիշատակարաններ, ինչպէս Մեմփիսի Մեռելաքաղաքը (Եգիպտոս), Ետրուրական դամբարաններ, Տրովադայի հերոսներու դամբանը. — Երկրագունդի պատմութեան գլխաւոր անցքերը en diorama. — Երկրիս կեդուին կազմութիւնը .

— Ֆրանսական լճափ մը՝ հանքածուխի դարուն մէջ, — Մովսի մը երկրորդակ դարուն մէջ, — Փարիզը գածի դարուն մէջ եւ չորրորդակ դարու քարայր մը՝ մէջը խոշոր եղջիւրաւոր մը: — Յետոյ ժամանակակից կամ պատմական քարայրներ, ինչպէս Մեռեալ Մովու արեւուն վրայ՝ ճգնաւորի քարայրը, — Անամի մէջ Տուրանի Մովսիսորչին սքանչելի քարայրները, Գափրիի (Իտալիա) կապոյտ քարայրը, Փատիրաքի քարայրը՝ լուսեղէն ջրվէժով մը եւ ստորերկրեայ գետափով մը, — Ռէնսի գեանախորչերը:

Ստորերկրեայ աշխարհին մուտքը եւ ելքը կը գտնուին Թրոքատէրոյի հսկակաւոր պալատին ստորոտը, որուն հին քարանձանքերը, որոնց վրայ ան կառուցուած է, իրենց մէջ պատսպարած են վերոյիշեալ 16 սրահները: Մուտքը եւ ելքը քարայրի մը մուտքին ու ելքին տարւորութիւնը կը թողուն ու կը նշմարուին հեռուէն իրենց կրած վիթխարի անասուններով, — մէկը մուտքի դուռին վրայ՝ հսկայ ագելվազիի մը (Kangourou) նմանող անասուն մը (iguanonod), որ կ'ազդէր երկրորդակ դարուն մէջ, իսկ միւսը՝ ելքի դուռին վրայ, անձուռի թանձրամորթ մը (mégathérium — մեծագազան), որ կ'ազդէր երրորդակ դարուն մէջ: Երկուքն ալ խոտակերներ են, առաջինը սողուններու գասակարգէն՝ կը կրէ երեք մասներ իր թաթերուն վրայ, որոնք զինուած են սուր մագիլներով եւ որուն բրածոն գրանուած է Պէրնիսարի անտառներին մէջ, Ֆրանսայի սահմանազլխի մօտ՝ Պէլճիքայի հողին վրայ: Դիտելի է որ իր բուն գիտական անունն է (iguanonodon bernissartensis-ի կուանոսն պէրնիսարիէնսիս) պիտեիսարի իկուանոսն, անուն մը՝ որ ստացած է վերոյիշեալ անտառները: Ու իրօք, այդ անասունին բրածոները կը գտնուին, 19 հաս, Պրիւրսէլի բնապատմական միւզէին՝ Պէրնիսարի սրահին մէջ: Անոնց մեծագոյնը ունի 11 մեթր երկայնութիւն՝ զլուխէն մինչեւ ագիին ծայրը: Այս անասուններու առաջին երկու անդամները կարճ են՝ եւ հատիկները շատ աւելի երկար՝ ճիշտ ագելվազի պէս. մնալով այս վերջին նման կանգուն զիւրքի մը մէջ, իրենց ագին, խոշոր ու թանձր, կը կա-

տարէ սաքի մը զերը, ձեւացնելով վերջի երկու ոտքերուն հետ՝ յինարան՝ ետոսանի մը: Իրենց ակօաները՝ թեւճակի (spatule) ձեւով, զարգարուած երկայն ծալքերով եւ ցցուած ծնօտներուն վրայ, թոյլ կուտային փշրել սնունդի ծառայող բոյսերը:

Երկրորդը, ստնաւորներու գասակարգէն, անասուն մ'է՝ որ զինուած է տափակ եւ ակօտաքեկ ակօաներով, որոնք խիստ յարմար էին բոյսերը մանրելու: Եւ արդէն մեծագուցանը կառչած է ծառի մը բունին եւ կը ջանայ զայն կտորել:

1. Սրահ: Փիւնիկեան հանքի մը հատուածը (chantier) — կը ներկայացնէ իբր 3000 տարի առաջ Փիւնիկեցիներու ձեռքով կատարուած հանքային ատաջին աշխատութիւնները: Պղինձի հանք մ'է, ուր գերիներ կ'աշխատին՝ ոմանք փայլուն եւ կարծր հանածոն խորտակելով եւ ուրիշներ իրենց կռակը չափած խոշոր զանդուածներ՝ ոլոր-մոլոր արահետներէ անցնելով՝ դուրս տանելու համար: Հսկող մը, ձեռքը խարազան մը առած, կը շաշեցնէ զայն, մղում տալու աշխատութիւններուն եւ կը սպաննայ գերիներէն մէկին որ կը անտնայ:

2. Սրահ: Կտպարի հանք մը 16 դարուն մէջ. — Դուրս ելլելով միջնուղիէ մը (galerie), աջակողմը կը տեսնուի հանածոները վեր հանող մեքենան, որ կը բազկանայ ջրաբաշխական կրկին անիւներէ: Վերը՝ որմախորշի մը մէջ, կեցած է մարդ մը, մեքենավարը, որ ջուրին հոսանքը կ'ուղղէ անիւներուն մէկին կամ մեւտին վրայ, ու հանածոյով լի սակաւները կ'իջնեն հանքին խորը: Զախակողմը կը գտնուի հովանար գործին՝ խոշոր փքոցներէ կազմուած, զոր կը վարէ գործաւոր մը՝ ոտնակներուն (pédales) վրայ ճնշելով:

3. Սրահ: Մեմփիսի Մեռելափողաքը (Թի իշխանին դամբարանը). — Կահիրէի մօտ, հին Մեմփիսի ընդարձակ գերեզմանատունը կը սարածուի 20 քիլո-մետրէ աւելի երկարութեան մը վրայ եւ կը բազկանայ սասրերկրեայ քարափոր սենեակներու շարքէ մը՝ քանդակազարդ կամ նկարազարդ որմերով: Այդ սենեակներէն մին, որ գտնուած է

հուշակաւոր Մարիէթի ձեռքով, կը ներկայացնէ այս սրահը, եւ թի անուն իշխանի մը դամբանն է: Կ'երեւի թէ՛ այդ իշխանը կ'ապրէր Ծրգ հարստութեան ժամանակ, 5000 տարի առաջ: Մէջտեղը կը ատնուի իր եւ կնոջ արձանները, շուրջը՝ որմերուն վրայ, նկարուած խորաքանդակները կը ներկայացնեն իր կեանքի զանազան դրուադները (episode), ուր ինքը կը ճանչցուի դիւրութեամբ իր անհամեմատ բարձր հասակովը: Հոս կը ատենենք նաև մը, որ Եգոլպիայի խորերէն իշխանին ընծայ զրկուած գերիներով, փղոսկրով եւ ոսկիի փոշիով բեռնաւորուած, կը քերէ զանդադօրէն նեղոսի ափերը, հոն՝ խորքերու (կռունկներու) տարմ մը, զոր հովիւներ կ'արածեն. անդին՝ պատկերներ, որ այլաբանօրէն կը ներկայացնեն իշխանին այգիներուն եւ դաշտերուն արտադրութիւնները, անոնց որակը եւ քանակը, եւ այլն:

4. Սրահ: Ազամեմնոնի գերեզմանը Մեկենայի մէջ. — Այս գերեզմանը, զոր գտաւ վերջերս գերմանացի հնասխոյզ Պ. Հլիման՝ Մեկենայի մէջ (Իզնիկի մօտ) կը բազկանայ բարձր գմբէթէ մը, պղնձէ վարդերով դրուագուած եւ որու տակ կը հանպչին Տրովազայի հերոսները՝ թանկագին անօթներով շրջապատուած եւ իրենց ոտքերէն մինչև գլուխը ոսկիով ծածկուած: Զարմանալի է մանաւանդ իրենց ոսկիէ գրեմակը: (Ք. Ա. 5000 Տ.):

5. Սրահ: Ետրուրական դամբարան. — Ետրուրացիներուն արուեստը որ ծանօթ է մեզ սեւ անօթներով եւ վրան կարմիր պատկերներով կամ կարմիր անօթներով եւ վրան սև պատկերներով, մեր թուականէն իբր 11 դար առաջ արտադրած է այն նշանաւոր գործը, որուն հաւատարիմ նմոյշներէն մէկն է հոս ներկայացածը եւ որ գտնուած է Իտալիայի մէջ՝ Փէրուզի շրջակայքը: Առջեւը կը տեսնուի սրահ մը, երկու գեղեցիկ ճակատներով (fronton), պղնձի աշտանակներ եւ խորը հողէ շինուած թրծուն երեք գերեզմաններ, մին հօրը միւսը որդիին եւ երրորդը աղջիկին համար:

6. Սրահ: Հոովմի գետնազամբանները (catacombes). —

Հոս կը տեսնենք Հոռվի գետնազամբաններու մէկ անկիւնը; ուր առաջին քրիստոնեաները կը հաւաքուէին աղօթելու եւ իրենց մտեւնները թաղելու համար: Մէկ կողմը կը գտնուի Հոռվի Հայրապետներէն մէկին՝ Ս. Կուսնելիոսի (Քրիստոսի 250-253 թուականին) գերեզմանը:

7. Սրահ: Երկրագնդի կազմութիւնը. — Երկիրը տակաւին հեղուկ լաւայի առաջին խաւ մը կը կազմուի իր մակերեսին վրայ: Շողիով բեռնաւորուած երկինքի մը մէջ կը փալիւրին անհամեմատ մեծ արեւ մը եւ տակաւին հրաբորբոք լուսին մը: Երբեմն երբեմն փայլակներ կ'ախօսաբեկեն երկինքը եւ անձրեւներ կը խայտաբղէտեն: Լաւայի կեղեւը սեղ սեղ կը պատուի եւ ատրաշէկ նիւթեր կ'երեսին, նիւթեր՝ որոնցմէ շողիի հոտանքներ կը ցայտեն դուրս:

8. Սրահ: Ֆրանսական լիճ մը ամխաբեր դարուն մէջ. — Վերջալոյս է, լճակը կը ծաւալի հարուստ բուսական նութեան մը մէջանդ. ձախակողմէն եկող հեղեղ մը կը քէ եւ կը բերէ իրեն հետ բոյսեր եւ մամուռներ, որ փտտելով՝ ջուրերու տակ կը կազմեն հանքածուխը: Լճակին մօտ կ'երեսին ժամանակին ցամաքային միակ անասունները. խոչոր աշխատանք մը (մողէղի տեսակ) վարը ժայռի մը վրայ, եւ մեծկակ շիպիլիլ մը ծառերու մէջ սաւառնաթիւ:

9. Սրահ: Երկրորդակ դարուն մէջ բուստերու խարակ մը եւ ծանծաղուտ մը (plage) Ֆրանսայի ափերուն վրայ. — Աջակողմը բուստերու խարակը ակնախտից տեսարան մը կ'ընծայէ, ջուրէն դուրս ճեփ-ճերմակ, իսկ ջուրին մէջ կաս-կարմիր հրաշագեղ հողմածաղիկներով (anémone de mer) ծածկուած: Օդին մէջ կ'երեւայ թռչուն սողուն մը (reptile volant), ջղջիկի նմանող, սեփ-սեւ, մասնաւորեղև (ptéro-dactyle) է այն՝ վառեակի մը մեծութեամբ, խոչոր գլուխով օտուուած եւ իր կտուցը կամ դունչը կես ակուններով զինուած: Առջևի կողմէն երկու անդամները շատ աւելի վարպացած՝ միացած են ետեւի կողմի անդամներուն եւ աբիին թաղանթածեւ մաշկով մը, որ թիւի երեւոյթը կ'ընծայէ:

Ձախակողմը ծանծաղուտ մը՝ այն դարու ողորկապատաններով ծածկուած, ինչպէս ամոնեղջիւրներ (ammo-

nites), եւն: Հետուն իկուանոտներու երամ մը (մուսքի դուան վրայ տեսածնուս նման), որ իրենց անդամներուն վրայ կանդուն կը կայստեն կոնարներնու (conifere) անաստի մը մէջ: Չուրին մէջ երկու անձոտնի անասուններ, ձկնամողէզ (ichtyosaure) մը եւ օձամողէզ (plesiosaure) մը հարկու կելու մը կը մղեն իրարու գէմ: Գիտենք թէ՛ այս ծովային սողունները այնքան առատ էին ժիւրայեան ծովերու մէջ՝ որքան կէն ձուկերը այսօր Պէկրինկայի ծովին մէջ: Առաջինը կը հասնէր մինչեւ 23 մետր երկայնութեան եւ կը կրէր խոշոր գլուխ մը՝ երկար գունչով. երկու կզակներն ալ զինուած էին խոր ասամակապիճներու (alveole) մէջ հաստատուած ակասներով. ունէր խիստ կարճ վիզ մը, երկար ազի մը եւ լողալու յարմար անդամներ: Երկրորդը աւելի նուազ երկայն՝ ունէր, ընդհակառակը, փոքրիկ գլուխ մը, երկար պարանոց մը, կարճ ազի մը, անդամներ՝ որոնք կը վերջանային լուղակներով:

Ծովէն դուրս ծառաւէտ պտերներու մէջ կը նշմարուի երկրագնդի վրայ երկուցոց առաջին սողնաթռչունը (archaeopteryx), որ սողունի եւ թռչունի կրկնակի յատկանիշները կը կրէ իր վրայ. փոքրիկ գլուխ մը, չորս թաթեր եւ երկար ազի մը: Իր ծնօտները ասամակապիճներուն մէջ ջրցուած ակասներով զինուած են. առջևի կողմի անդամները թեւի վերածուած են, բայց մատները սակաւին բացօրոջ՝ զինուած են մազիլներով, ազին կը բաղկանայ 20ի չափ ողներով (vertèbres), որոնց իւրաքանչիւրը կը կրէ զոյգ մը փետուր:

10. Արան: Փարիզը գտնի դարուն մէջ. — Ասիկա Թրոքատէրոյի ընծայած տեսարանն իսկ է, երրորդակ դարուն սկիզբը: Արեւադարձային հարուստ բուսականութիւն մը ծածկած է Թրոքատէրոյի բարձունքը, ուր ման կուգայ դափերի նմանող անհիթիթ անասուն մը՝ հնագազանն (paleotherium) է այն, սանաւորներու դասակարգին պատկանող թանձրամորթ մը, սմբակաւորներու (périssodactyle) ազգէն: Այս անասունը կ'ապրէր խառնագանին (anoplotherium) եւ մեծագազանին (mégathérium) հետ, զոր տեսանք մուսքի

դուռին վրայ, Փարիզի աւագանին մէջ գտնուած լիճերու եւ գետերու ափերուն վրայ:

Դիտելի է թէ Թրօքատէրօյի բարձունքը կազմուած է դաճէ՛ երրորդակ դարուն սկիզբը, այդ դաճը մէկ կողմէն կը տարածուի մինչեւ Մէտօն եւ միւս կողմէն մինչեւ Մօնմարթը, ուր երեսուն մեթր թանձրութեան կը հասնի: Այդ գաճի զանգուածներուն մէջ է որ գտնուեցան Մեծագազանի, Հնագազանի, Լեանագազանի, եւն. բրածոները՝ զոր Բիւվիէ վերանորոգեց՝ դնելով բազդատական Անգամագննութեան հիմը:

11 Սրահ: Չորրորդակ դարու մեծ եղջերուն. — Ժամանակակից է այդ անասունը առաջին մարդուն երեւնալուն, եւ կ'ապրէր քարայրներու մէջ՝ հնավիմական շրջանին: Այդ միջոցին սաստիկ եւ չոր ցուրա մը կը տիրէր Եւրոպայի մէջ՝ սառնարաններուն դէպի հիւսիս քաշուելուելուն պատճառով, այնպէս որ մարդ ու անասուն քարայրներու մէջ պատսպարան մտնուելու ստիպուեցան, ու այսպէս կը բացատրուի թէ ինչու մեծ եղջերուն քարայրի մը մէջ գտնուեցաւ: Մարդուն սակաւին անձանօթ էին ընտանի կենդանիները. ան նկարներ կը քանդակէր այդ եղջերունի ոսկորներուն վրայ եւ ասեղներ կը շինէր անոնցմով՝ կարելու համար իր մորթէ զգեստները:

12 Սրահ: Մեռեալ ծովուն ճգնաւորներու քարայրը Մար-Սապայի մէջ. — Ծովեզրը քարաժայռի մը կատարը կը տեսնուի քարայր մը, ուր կը բնակի մենակեաց մը՝ սնանելով բարսէր մարդոց իրեն բերած կերակուրներով, զոր վեր կը քաշէ ճախրակէ մը կախուած դոյլի մը միջոցով: Մօտը կը նշմարուի ամրացած մեծ վանք մը՝ ժայռերու մէջ իր խուցերով, ուր, աւանդութեան նայելով, բնակած է սուրբ Սապա՝ առիւծի մը հետ: Այս պատկերը Սիւնակեացներու շրջանին ժամանակակից է, քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ:

13 Սրահ: Վախրիի կապոյտ քարայրը. — Կը գտնուի Նախովիի ձօտ, ծովը, ժայռերը, մթնոլորտը ամեն ինչ կապոյտ. պերտզակէ պալատ մը կամ շափիւղայէ լիճ մը:

14 Սրահ: Շանփաներ գինիին պատրաստութիւնը Ռէն-սի մտանններուն մէջ:

15 Սրահ: Փատիրաքի քարայրը լուսաշող ջրվէժով եւ ստորերկրեայ գետակով. -- Ստորերկրեայ ցուցանանդէսին գլուխ գործոցն է. քարայրի մը կամարէն կը բարձրանայ, գէպի դուրս, գլանաձեւ բացուածք մը, ուրկէ ներս կը խուժէ շողշողուն ջրվէժ մը, ընծայելով տեսարանական հիանալի երեւոյթ մը: Զուրը կը ձեւացնէ վարը մեծ լիճ մը, որմէ ծնունդ կ'առնէ գետակ մը, որ, օձապտոյտ սողակելով պաղաքարերով (stalagmite) զարդարուն սրահներու մէջէն, կ'անհետանայ երկիրին ալիքուն մէջ:

16 Սրահ: Աննամի ստորերկրեայ կոտորները. -- Մարմարէ լեռի մէջ գտնուած քարայրներու խորը կը տեսնուին անյիշատակ փամանակներէ մնացած տաճարներ, որ կը պարունակեն տարօրինակ աստուածներ եւ բազմաթիւ պուտտաներ: Գմբէթին ծակտիներէն, որ խճողուած են հսկայ բաղեղներով, ներս կը թափանցէ զմրուխտի նման կանաչ լոյս մը, ու կապիկներ կառչած այդ բաղեղներուն՝ ապուշ կը նային այցելուներուն:

ԳԻՈՐԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Ուսանող Փարիզի Հանգր. Բարձր Վարժարանին

ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Պատասխանք

ԽՈԳ - ՊԵՏ

Դ

ԳՆԵԱՆՈՍՈՒԹԻՒՆ

Սահեան . — Քննախօսութիւնը (*) կամ բառին լայն իմաստով՝ ֆենադաստիքները գրելու կամ շարադրութեան ձեւ մ'է որ նպատակ ունի ընդլայնել յայտնուած գաղափարներ, կարծիքներ, գտնոնք մեկնաբանել ու անոնց նշեարիս կամ սխալ կողմերը ցոյց տալ :

Ուրեմն քանի որ խնդիրը գաղափարին շուրջը կը դառնայ, ըսենք որ ատիկա կրնայ լինիլ բարոյական հայեացք մը, դրական ակնարկ մը, փիլիսոփայական, գիտական եւ վերջապէս ընկերական կարծիք մը :

Քանի որ ապացուցանելու համար պէտք է կամ հաստատել եւ կամ հերքել, իբր կանոն եւ հետեւեղի ուղղութիւն կրնանք ալ ուրեմն, քննադատելի հարցին նախ երկու հակառակ ծայրերը փնտռել, — այսինքն գտնել անոր երկու հակառակ գաղափարները, որոնք պիտի կազմեն գրութեան մեկնութի երկու գլխաւոր կէտերը, որոնց յարաբերութիւնը

(*) Տե՛ս Համալսարան, էջ 90 — Թիւ 2 :

ներու վրայ լաւապէս որոճալէ յետոյ կարելի պիտի լինի երկրորդական գաղափարները մի առ մի իրարու հակադրելու եզրակացութեան յանդիլ։ Այսպէս միեւնոյն ատեն կատարուած պիտի լինին մեր նախապէս ցոյց տուած գիւտի եւ կարգաւորումի (տես Հանաքարան էջ 19-21) շարադրելու բնական օրէնքները։

Յասակագիծ. — Քննախօսութեան մը յատկապիծը պատրաստելու համար պէտք է նկատի ունենալ միշտ, երկու գլխաւոր կէտեր. Արդարացում եւ Հեղինակութիւն։ — Ուրեմն նախ ջանալու է գտնել թէ որոնք են այն փաստերը որ կրնան պաշտպանել յայտնուած կարծիքը, ինչ որ լինի առ, ու յետոյ՝ որոնք են այն գիտողութիւնները որոնք կը ձխարացնեն անոր ճշտութիւնը։ Եզրակացութիւնը կը լինի բացառական կամ նպաստաւոր, երկու հայեցակէտերու իրարու վերայ ունեցած առաւելութեան համաձայն։

Օրինակով մը բացատրենք. — Մեկնաբանել հետեւեալ խօսքը.

«Մահամերձներու խիզճը կը դատապարտէ իրենց կեանքը»։

Այս կարծիքին առջեւ անմիջապէս պէտք է ջանանք գտնել այն գաղափարները որոնցմով կարելի է զայն արդարացնել եւ յետոյ անոնք՝ որոնք զայն կը դասաւարտեն, եւ հասնիլ եզրակացութեան։

Գաղափարին արդարացումը գտնելու համար հարկ է որ վերլուծենք մահամերձին վիճակը եւ անոր ազդեցութեան տակ ծագող խղճահարութիւն մը որ պիտի դատապարտէ կեանքը։ Իսկ հերքումի կէտերը գտնելու համար, միեւնոյն վերլուծումը պիտի շարունակենք ընդհանուր տեսակէտով, այսինքն թէ մահամերձի այդ զգացումը ընդհանուր է ամենուն մէջ։

Յատակագիծ

Արդարացում.

Ա. Մահամերձ վիճակ եւ խղճահարութիւն։

1. Բարոյական եւ հոգեկան տկարացում։
2. Երկիւղ։
3. Չար մարդիկ։

Հերժում.

Բ. Մահամերձ վիճակ եւ խղճահարութեան չըզոյութիւն:

1. Ընկերային, կրօնական եւ իմաստասիրական ըմբռնումներ:

2. Խիղճի հանդարտութիւն եւ հոգեկան աներկիւղ վիճակ:

Եզրակացութիւն.

Պէտք չէ մարդը դատել իր վերջի վայրկեաններէն:

— Երբ քննախօսելի գաղափարին յատակագիծը այսպէս տրամաբանօրէն կը պատրաստուի, զայն ընդլայնելու պահուն, հարկաւոր է, իր սկզբնապատկեր, կամ ներածութիւն, պարզաբանել այդ գաղափարին իմաստը:

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Սկզբնապատկեր. — Բարոյախօս մը ըսած է. «Մահամերձներու խիղճը կը դատապարտէ իրենց կեանքը». անշուշտ, ասով ըսել կ'ուզուի՝ թէ կեանքի վերջին վայրկեաններուն մարդս կը զգայ թէ իր կարծածէն աւելի գէշ կեանք մը վարած է. արդ, խնդիր է գիտնալ թէ ճիշտ է բարոյախօսին յայտնած այս գաղափարը:

Արարացում. Ա. — Իբօք երբ մարդ կը գտնուի իր կեանքի վերջի վայրկեաններուն մէջ, յաճախ կը պատահի որ վերջին ճիգով մը ինքն իրեն հաշիւ տայ իր անցուցած կեանքին վրայ: Հիւանդագին վիճակի մը այս բուպէին, որ ապառնի կեանքի մը հրապոյրը կը բորբոքէ մահամերձին երեւակայութեան մէջ եւ ուր սահող կեանքին ոչնչութիւնը իր իրական գոյներով կը ներկայանայ, անպակ մը զղջում կը ծնի անոր հոգիին մէջ, որ կը խղճահարէ զայն, կ'ահարեկէ զայն՝ իր գործած համեմատաբար խիստ փոքրիկ եւ աննշան պակասութիւններու յիշողութեամբ:

Կորուստի եզրկիւրը կը վանէ անոր մէջ տրամաբանութիւնը. ու ապառնի կեանքով մը ապրելու աննշանօղ մարդը՝ ինքն իրեն լքուած՝ այս գերագոյն վայրկեաններուն, ուր շողօքորթներ կը պակսին իր թերութիւնները փայ-

փայելու համար, հոգեպէս կը տկարանայ, կը տառապի եւ իր անցեալը կը դատապարտէ:

Նմանապէս կեանքը հրէշային կ'երեւի յաճախ այնպիսիներու, որոնք իրենց վերջի բուպէին կը զգան դէշ կենցաղի մը ծանր կշիռը, ու դառնացած կերպով զայն կը նըզովեն:

Հերֆուռ. Բ. — Մահամերձի վիճակը սակայն միեւնոյն երեւոյթներով չի ներկայանար ամեն մարդու մէջ: Մահուան երկիւղը չլինելով ոյժգին՝ միեւնոյն զգայական վիճակը ամեն անդ չի յայտնուիր: Այս պարագան կը շեշտուի այնքան աւելի, որքան քննենք մարդուն նիւթապաշտ համուզումները եւ ընկերական հայեցողութիւնները, որոնցմով տողորուած է ան խորապէս եւ որոնցմով անդրդուելի կերպով իր կեանքի վերջին վայրկեանին՝ զայն դատապարտելէ բոլորովին հեռու, դժգոհ կերպով մը կը մտանայ յաւիտեանական ոչնչութեան: Կեանքն է անոր գոյութեան միակ իտէալը, ու կը փարի անոր եւ կը սիրէ զայն:

Միւս կողմանէ բարութեամբ լի կեանքի մը հետանալը՝ կրօնական եւ իմաստասիրական սկզբունքներով սնած հոգիները ուրախութեամբ կը դիտեն եւ գոհ սրտով կը ծրծեն մահուան բաժակը:

Եզրակացութիւն. — Ուրեմն պէտք չէ միշտ գատել մարդիկ իրենց վերջին վայրկեաներէն, ուր անոնք վրդովուած եւ ջգածիք վիճակ մ'ունին եւ տէրը չեն իրենց դատումներուն. այնպէս որբարոյախօսին խօսքը՝ թէ «Մահամերձներու խիղճը կը դատապարտէ իրենց կեանքը», բազարձակ ճշմարտութիւն մը լինելէ հետի է:

Մանկավարժական ֆակի մը դիտողութիւններ

Քննախօսական մը գրելը՝ ամենազժուար վարժութիւն մ'է. ինչ որ ալ լինի հարցը, անոր բնոյթը, իր մէջ կը պարունակէ գազափարներու շարք մը, զոր պէտք է գտնել,

որոշել. ուրեմն խորհելու, մտածելու վարժուած պէտք է լինի միտքը՝ կարենալ տարրազգրիլու գաղափարները եւ զանոնք վերածելու՝ իրենց մանրամասնութիւններու մէջ։ Այդ բանին հասնելու համար, հարկաւոր է արգէն ունենալ գիտական եւ գրական որոշ չափով մը պաշար, կարգացած ըլլալ քննադատական բազմաթիւ գործեր։

Խորհողութիւնը, յիշեալ պայմաններու տակ, միտքին կանթեղն է, լուսաւոր աստղը, որ պիտի պայծառացնէ ամբողջ հարցը ու զայն վերլուծէ եւ մեկնաբանէ։ Նեւտոնին հարցուցին օր մը թէ ինչպէս յաջողեցաւ ընել իր գիւտերը, պատասխանեց. «Անոնց վրայ խորհելով»։ Ժան Ժաք Ռուսօ կ'ըսէր. «Իմ գաղափարներս միտքիս մէջ կը շրջին խօլաբար, կը խմորուին հոն, զիս կը յուզեն ու կը գրգռեն... Անզգալաբար այս մեծ շարժումը կը խնայողի, այս քառոր կը կարգաւորուի եւ իւրաքանչիւր բան իր ճշմարիտ տեղը կը գտնէ»։

Այս կարգի խնդիրներու վրայ աշակերտները վարժեցնելու է միակ պայմանով մը, — ընտրել ամենէ տարրական նիւթերը եւ զանոնք լուսաբանել միմիայն բարոյական հայեցողութիւններով։

Որպէսզի աշակերտները նիւթին լաւապէս տիրանան, պէտք է նախ զայն բացատրել. այս բանին համար հարկաւոր է սահմանել այն ամեն եղբները, որոնք մտածումներ կը պարունակեն, անոնց ճշմարիտ արժէքը հաստատել, նշանակութիւնը որոշել եւ այդպէս հասնել ընդհանուր գաղափարին ու զայն մանրամասնել։


* *

Քննախօսութեան համար մեր ցոյց տուած մեթոտով, փափաքողները կրնան վարժութիւններ գրել հետեւեալ նիւթերու վրայ.

«Աշխատութիւնը հաճոյքի հայրն է»։ —

«Եթէ կ'ուզես հաւատարիմ ծառայ մը ունենալ, որ քեզի հաճելի լինի, գու քեզի ծառայէ»։ —

«Աւելի մեծ ամօթ է իր բարեկամներու վրայ անվստահութիւն ունենալը, քան թէ անոնցմէ խաբուիլը»: —
«Մարդ ճաշակ ունենալու համար՝ հոգի ունենալու է»: —

 Մրցումք կը դնենք հեռեւեալ գաղափարը .

«Մարդը ընկերութեան համար ծնած է»:

Այս հարցին մէջ երկու գլխաւոր գաղափարներ են վարդը եւ ընկերութիւնը . վերլուծելու համար պէտք է սահմանել թէ՛ ի՞նչ է մարդը, ի՞նչ են անոր ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական ընդունակութիւնները որոնցմով անիկա ընկերութեան պարտի փարիլ: Ու ի՞նչ է ընկերութիւնը, իր նպատակը որ ծնունդ առած է մասնաւորներու, անհատներու, մէկ խօսքով մարդոց համախմբումէն:

Երրորդ գաղափարը որ պիտի ծագի առաջիններէն անոնց հաստատական Եզրակացութիւն մը պէտք է լինի:

Կրօնած շարագրութիւնները պէտք է ուղղել «Համալսարան» ի խմբագրութեան, առաջին տեղը շահողը պիտի ստանայ մէկ տարեկան «Համալսարան» ձրիագար, ու իր գրութիւնն ալ պիտի հրատարակուի:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՍԵՐՄԵՐՈՒՆ ՏԱԳՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐՈՒ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Սերմերու չի բուսնելու գլխաւոր պատճառներէն մէկն ալ վնասակար միջատներու ձուերն են, որոնք կեանք առնելով կը յարձակին հատիկները կազմող սննդաբար մասերուն եւ կը փճացնեն զանոնք:

Երկու երիտասարդ հողագործ գիտուններ Շրիպօ (Schrihaux) եւ Պիւսարօ (Bussaro) ուսումնասիրելով հաստատած են, որ միջատները տաքութիւնով դիւրաւ կը մուսին. ոմանք նոյն իսկ երկու վայրկեան 50 աստիճան տաքութեան չեն կրնար դիմադրել եւ ուրիշներ ալ 60 աստիճան ջերմութեան մէջ հազիւ հինգ վայրկեան կրնան ապրիլ: Չոր տաքութիւնը մեծ ծառայութիւն կը մատուցանէ սպաննելու համար միջատներու ձուերը եւ մակաբոյժ սունկերու սերմերը: Մինչեւ հիմա գիտուած չէր սերմերու ջերմութեան դիմադրելու զարմանալի կարողութիւնը, ուրկից կարելի պիտի լինի օգտուիլ գործնական կերպով: Միւս նոյն գիտունները հաստատած են որ, եգիպտացորենէն զատ միւս արմախիքները կրնան մէկ ժամ 100 աստիճան ջերմութեան մէջ պահուիլ ու չի կորսնցնել իրենց ծլիլու կարողութիւնը. 13 առ 100 ջուր պարունակող ցորեն մը՝ 10 ժամ, շարունակ, 100 աստիճան տաքութեան ենթարկած

են, ուրիշ 9. 4 առ 100 ջուրը պակասած է, ասով մէկտեղ
100 առ 100 շատ ատուղ ծիլերով բուսած է:

Փաֆէ ըսուած ցորենը ժամ մը պահուելով՝

105	աստիճան	ջերմութեան	մէջ հարիւրին	97ը	ծլած է.
110	«	«	«	97ը	«
115	«	«	«	95ը	«
120	«	«	«	56ը	«
128	«	«	«	4ը	«

Այսպէս ուրեմն, քանի մը վայրկեան միայն բարձր
բարեխառնութեան ենթարկելով սերմնացուները՝ կարելի
պիտի ըլլայ սպաննել անոնց մէջ պարունակուած կեն-
դանական կամ բուսական վնասակար տարրերը, առանց
փլասելու սերմերու ծիլու կարողութեան, Հաստատուած
է, որ ջերմութեամբ չորցած սերմերը աւելի ազէկ կը ծը-
լին եւ շատ աւելի երկար աստն կրնան պահուիլ, թէ հո-
ղին եւ թէ շտեմարաններու մէջ:

Ուրեմն կարելի պիտի լինի, այս միջոցով, դորձնա-
կանին մէջ ցաներու չի բուսնելուն գլխաւոր արգելքնե-
րէն մէկն ալ ջնջել:

Գ. Գ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ (*)

(*) Պատահաբար մոռցուած է Հարապարտանի 5-6 թիւե-
րուն մէջ՝ կար յօդուածին (էջ 252) տակ նշանակել Պ. Գ.
Մեծատուրեանի անունը, որուն կը պատկանի յիշուած յօ-
դուածը:

Յաճախ ալքօլամոլները, որոնց իմացականութիւնը տակաւին վնասուած չէ մոլութիւններով եւ որոնց մէջ խղճահարութիւնը գեռ կ'առկայծի, բժշկատուն կը գիմննինչպէս որ ուրիշները եկեղեցի կ'երթան փրկութիւն հայցելու համար :

— « Միջոց մը ցոյց տուէք մեզ, կ'ըսեն անոնք, դիմագրելու մեր ախտին, այլեւս տոկալու ոյժ չի մնաց մեր վրայ, եւ քանի որ անոր չարաչուք հետեւանքներուն չենք դոճուած, կը փափաքինք անկից ազատելու : »

Տօք. Պէրիցօն նկատելով որ ալքօլամոլները կարելի է քննացնել, կը ջանայ օգտուիլ քերտորելիութեան ապեցուծեանէն, թէեւ բաւական դժուարին էր օգտակար արգիւնքի մը հասնիլը, քանի որ ալքօլամոլներու անպիտանօրէն ուռճացած ուղեղը գիւրութեամբ տեղի չպիտի տար նոր գազափարի մը՝ իր վրայ զօրաւոր եւ խորապէս դրոշմելուն՝ վրասարելով հին եւ տոկուն սովորութիւնները :

Գինոլի մը հեռաւաւսիկ պատահածը :

Չայն քննացնելէ վերջ սօքթօնը գեանին վրայ կը քաշէ կաւիճով սպիտակ գիծ մը. « կը տեսնէք ասիկա, կ'ըսէ անոր, գինետունի մը դուռն է : » Անմիջապէս մարդուկը քայլը կը փոխէ գիծէն անցնելու համար, բայց բժիշկը զայն կը կեցնէ հրամայողական եւ հաստատական շեշտով մը .

« Դուք կարող չէք այս գիծէն անդին երթալու : » նըմանապէս, կը յարէ բժիշկը, երբ դուք արթննաք, ձեզի անկարելի պիտի լինի գինետունէ մը ներս մտնելը : »

Խմելու անյագ տենչը եւ ալքօլի գաղտփարն այս փորձը պարապ հանեցին . ու գինովը աւելի վրդոված բժշկատուն կը վազէ , այնպէս որ քանի մը անգամ թելադրութեան գործողութիւնը կատարուելէ վերջ , գինովը թէեւ գինեաւունէն ներս չի մտներ , սակայն դուրսը , գուռին առջեւ (terrasse) խմել կը սկսի , ու ընդհակառակը աւելի շատ քանակութեամբ կը խմէ : Այս անգամ բժիշկը կ'որոշէ ուղղակի կերպով մոլութեան գէժ կուռիլ : Ալքօլամոլին աջ ձեռքը կուտայ գաւաթ մը ջուր , իրեն ազդարարելով որ անոր մէջ գտնուածը ռապակնք է , գինովի ամենէ սիրած խմելիքը . — վերտոնի խեղճը կը փութայ գաւաթը իր շրթունքներուն մօտեցնել . բժիշկը կը կեցնէ զայն , անշարեութեան մասնելով անոր բազուկը խիստ հրաժանով մը : Գրգռած քունի մը մէջ խորասուզուած , հակառակ իր մոլութեան , պարտաւորուած էր հնազանգիլ : Հրամայուեցաւ որ միեւնոյն ձեռքի կասուժը պստանի արթուն վիճակի մէջ , երբ մարդը գոնուէր գաւաթ մը ալքօլի առջեւ :

« Լաւ մտիկ ըրէք , իրեն կ'ըսէր աքթէօսը , կը ստեղծեմ ձեր գլխուն մէջ , ձեր ձեռքին անդիմադրելի անշարժութեան շնորհիւ , այն կարելիութիւնը որով պիտի պարտաւորուիք արթուն վիճակի մէջ ձեր մոլութեան չկարենալ դոնացում աալ : Ինքզինքին իշխելու այս կարողութիւնը , որ ճշմարիտ մարդը կը պատրաստէ , ես ձեզ կը շնորհեմ . երբ ձեր ընկերներէն մէկը գաւաթ մը ալքօլ հրամայնէ եւ դուք զայն ընդունիք , յանկարծ ձեր ձեռքը ձեզի չպիտի հնազանդի : Ատիկա բաւական չէ , սակայն : Այս կիրքի զոչումին , որ ձեր ախարացած կամքը չէր կարող ձեզի շնորհել , բայց ինչ որ ես կրնամ ձեր մէջ արուեստականօրէն ստեղծել , կը զուգորդեմ այն ամեն բարոյական գաղտփարները զոր դուք մոռցած էք : Ձեր բազուկին անհնազանգութիւնը ձեզ պիտի արթնցնէ ինչպէս գէշ երազէ մը , ու պիտի մըստածէք ձեր կնոջ վրայ , որ ձեր բացակայութիւններով դժբաղբացած է , ձեր զաւակներուն վրայ՝ որ գուցէ գրկուած են հացէ՛ ձեր խմելուն պատճառով , ձեր առողջութեան վրայ՝ որուն խանգարումին պատճառ կ'ըլլաք . . . ու , քիչ քիչ ,

ձեր կամեցողութեամբ վերստին սեղանին վրայ պիտի դնէք ձեր գաւաթը, առանց անոր համը նայելու, եւ բռնութեամբ զայն խփել չկարողանալէ վերջ, զուք արամարանելով անկից պիտի հրատարիք: »

Քանի մը փորձերէ յետոյ, գինովին մոլութիւնը բարեփոխուեցաւ: Այնքան ուրախացաւ բժշկուողը լաւ կերպով կարենալ աշխատելուն, ինքզինք հետզհետէ լաւ աւողջութեան մը մէջ գտնելուն ու տունը խաղաղիկ կեանք մը ունենալուն համար որ յաճախ կ'երթար բժշկատուն իբր կենդանի օրինակ, թելադրելութեան բարերար ազդեցութիւններուն ջատագով ըլլալու:

Չմոռնանք յիշեցնել, որ քնէածական թելագրութիւններուն պէտք է կարելի եղածին չափ հոգ տանիլ, որովհետեւ մոլութիւն մը վտարելու համար անգամի մը կարկուտը կրնայ արթնութեան մէջ իր տեւական վտանգները ունենալ: Ամենէ զգոյշ միջոցը, երբ մոլութիւնը անհետացած է, բժիշկին պարտքն է բնական վիճակ մը արթնցնել անգամին մէջ, առանց մոլութեան բորբոքելուն սեղի սալու:

ԵՇԱՆ

ՔՕԼԷՐԱՆ ԵՒ ՁԵՐՄԱՐՈՒԺՈՒԹԻՒՆ

Ֆոյերան եւ ջերմաբուժութիւնը. — Ձերմարութեան վրայ խօսուած է Հաւալարանի 5-6 թիւերուն մէջ: Հիւանդութիւններու բուժիչ՝ այդ բարերար ազդակը կը թուի թէ պիտի ծառայէ քօլերան ալ դարմանելու:

Ճամբորդ մը քօլերայէն կը բռնուի եւ երբ բուժուի մեռած կը նկատուի՝ զայն կը գետնեղեն իր մեռած տան մէկ

անորոշ անկիւնը: Ծերունի տան տիկինը կ'անգիտանար դիակին ուր դրուելը՝ եւ իր փուռը վառելէ վերջ տաք մոխիրը՝ առանց ուշագրուծեան, անոր վրայ կը թափէ: Դիակը տաքութեան ազդեցութեամբ կը վերակենդանանայ, թէեւ իր մէկ քանի մասերը այրած կը լինին: Այս դէպքը պատահած է ժէնէրալ Ռընարին, (1370-ին Պելճիքայի պատերազմական գործերու նախարար) որ իր հրաշքով յարութենէն վերջը 40-50 տարիներ ալ կ'ապրի:

Յուսալու՞թ է ջերմութեամբ ազդու միջոց մը կարելի պիտի լինի գտնել այդ սոսկալի համաճարակը, քօլերան, դարմանելու համար:

ՀԻԻԾԱԽՏԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Հիւժախտի յռտական ծագումը. -- Ժամանակակից գիտութիւնը հետաքրքիր եւ եզակի գիւտով մը կը գտնէ թէ սկիորներու այտուչներէն (tumeurs) ոմանց գոյութեան պատճառը բուսական մակարոյժ մ'է, որ կը գտնուի ընդհանրապէս խոտերու ճիւղերուն, ցորենի հասկերուն եւ յարգի շիւղերուն վրայ: Մեծ որոճացողներու հիւանդութիւններու պատճառը բուսական աշխարհին մէջ որոնելու է:

Տօք. Մօէլլէր մարգագետիններու կանաչները ուսումնասիրելով՝ գտած է ցպիկ (bacille) մը որ Քօխի հիւժախտի ցպիկին յար եւ նման է: Այս պատիւը մշակելով եւ 15 օր պահելով տեսած է որ Քօխինին նման կը գունաւորուի եւ ունի անոր յատկութիւնները: Արգարեւ երբ այս մշակութիւնը ներարկուի հնդկախոզերու (cobayes), ծիւրախտի շիճուկին արդիւնքը կ'ուտայ. կենդանիները կը

մեռնին յար ու նման ախտանիշերով : Ֆրանսայի գիտու-
ներն ալ սկսած են ուսումնասիրել այս խնդիրը : Կրնան
ուրեմն ժարգագեանի բոյսերէն ոմանք Գօխի ցպիկներու պա-
տըսպարան լինիլ, անկից անցնիլ կովերու, վարակել նախ
զանոնք, այժ ստանալ, զօրանալ եւ ըլլալ մարդկային
հիւժախտի ցպիկը :

Խնդիրը անգամ մը հաստատելէ վերջը՝ կենդանիները
անոնց ազդեցութենէն ազատելու միջոցները պիտի վըն-
տըռուին ու առողջապահութիւնն ալ մեծ քայլ մ'առած
պիտի ըլլայ :

Կ. Մ.

ՀԱՄԱԼՍԱՐՈՆԻ ՄԱՏԵՆԱԳՈՒՄՆԵՐ

ՄՏԱՆՈՒԱԾ ԳԻՐԳԵՐ

Երեմ վեպիկ, Թարգմ. Լ. Մ. Ա., Թիֆլիս . 1896 . գին 20 կոպ.
Մելիք-Իշուրի (պատմ. Պօէմա), Յարութիւն Թումանեանց,
Թիֆլիս . 1900 . գին 20 կոպ. :

Նկարներ . Ն. Յարոյ, Թիֆլիս, 1898 . Գին 50 կոպ.

Նեկս (Մամիս պատմածը), Թարգմ. Կ. Թիւթիւնճեան,
Վառնա : 1900, գին կէս ֆր. :

Կանոնադրութիւն հակալքօլական ընկ. Պարսկաստանի . Դաւ-
րէմ : 1900 :

Կանոնագիր եւ Տեղեկագիր Թաւրիզու Լսարանական ընկե-
րութեան, 1900 :

Տեղեկագիր Եւրոպայի Հայ Ուսանող . Միութեան, Վիէն-
նա : 1897-98-99 թ. :

Պատուհանին Մարհակը (Թատերգ .), Տ. Մանալեան : Հրատ.
Զարբանէլեան, Վառնա, 1899 : Գին 1 ֆր.

Նոր Քնար Հայկական, Մասն Ա., հրատարակութիւն Յ.
Սիսակ, Վառնա 1897 : Գին 2 ֆր.

*Որոշ Կանոնադրութեան եւ Մրազրի Անհրաժեշտութիւնը ու Հայոց թեմական Հոգեւոր Դպրանոցների Վարչական եւ Ուսումնական կարգ ու կանոնի՝ Դիսցիպլինայի Միակերպութեան գաղափարը, Բժիշկ Ս. Շահ-Նազարեանց, Մոսկուա, տպ. Բարխ. 1900: Գին 1 ռուպլի:

Դասըսականի մը հասկանոս կարծիքները. հրատ. Ե. Տէր-Արիստակէսեանի. Մոսկուա, 1900: Գին 50 կ.:

Եօրն Ազաւա, Լ.Մ.-Ազամեան. հրատ. Թ. Հ. Հ. Ընկերութեան (Ա. Պողոսեանի գումարով), Թիֆլիս, 1900:

Անդարդ Հանկար, Լ.Մ.-Ազամեան. հրատ. Թ. Հ. Հ. Ընկերութեան (Ա. Պ. ի գումարով), Թիֆլիս 1900:

Տեղեկագիր Թիֆլիսի Հայ. Հրատ. Ընկերութեան 1899 թուի գործունէութեան:

Նոր Բերեցարան (Բ. Տարի), Կ. Յ. Պօնուքեան, Վառնա: Գին 1 ֆր.:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ — ԿՐԹԱԿԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈՒՆԵՐՈՒ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԸ

Համալսարանի Ս. Թիւին մէջ (տե՛ս էջ 56-57) առիթ ունեցած էինք անցողակի կերպով՝ մէկ երկու կարծիք յայտնելու Երեւանի Հ. Թ. Հ. Դպրանոցի մասին, թեյադրուած պ. բժ. Ս. Շահ-Նազարեանցի մեզ խրկած եւ սոյն հաստատութիւնը ակնաբեկող գրկոյթներէն:

Պ. Ս. Շահ-Նազարեանց խմբագրութեանս ուղղած մասնաւոր նամակով մը մեր գիտողութիւններու միանգամայն համակարծիք լինելը կը յայտնէր, —այսինքն ժամանակին հետ պէտք է փոխուին նաեւ մեր կրթական հաստատութիւններու ծրագրերը. որովհետեւ ժամանակն է որ կը յեղաշրջէ կրթութիւնը ու, բնականաբար, մեր պատանիներու ազգայն: Դարձեալ, նկատելով Երեւանի Հ. Թ. Հ. Դպրանոցի աշակերտներու ըմբոստութիւնները՝ վարժարանի ուսուցչական եւ վարչական մարմիններու գէմ, ըսած էինք՝ թէ հաւանականօրէն կրնանք գուշակել ո՛ր, այդ ըմբոստութեան մէջ, լինելու է գիտակցութիւն եւ գծողու-

թեան բանաւոր պատճառ մը, զոր փնտռելու է նոյն իսկ Դպրանոցի կազմակերպութեան մէջ, որ չի կարողանար պէտք եղած չափով զոհացում տալ ընկերական արդի պահանջներուն, եւայլն :

Պ. Ս. Շահ-նապարեանց իր միեւնոյն նամակով մեզ կը յայտնէր ամփոփաբար հետեւեալը. « Բոլոր վկայութիւնները միաբերան ձգում են Դպրանոցի արդի աշակերտական յանձնաժողովի, պակասութիւնների պատասխանատուութիւնը՝ աշակերտին շրջապատող հասարակական եւ պաշտօնական հանգամանքների վրա : »

Այդ հասարակական եւ պաշտօնական հանգամանքները պարզաբանող, ընդլայնող գրքոյիլը մեզ կը զրկէ յարելի բժիշկը անցեալները, ինչպէս խոստացած էր իր նամակով :

Գրկոյիլը, — որոշ կանոնադրութեան եւ Ծրագրի Անհատեղութիւնը եւ Զ. Թ. Զ. Դպրանոցների վարչական եւ Ուսումնական, կարգ ու կանոնի՝ Դիսցիպլինայի (Discipline-կարգապահութիւն) միակերպութեան գաղափարը — կ'սկսի պատմական ուսումնասիրութեամբ մը, որ նպատակ ունի պարզել Երեւանի Զ. Թ. Զ. Դպրանոցի անցեալը, անոր զարոցական անկանոն վարչութիւնը, պաշխպօզոյքաբիւնը եւ հետեւաբար կաղալուն պատճառները : Վարչական հեղինակ ոյժի մը հսկողութիւնը պակաս է հոն միշտ, որ տեղի տուած է բնականօրէն կարգ մը խառնակութիւններու ուռճանալուն, արմատանալուն՝ որոնք եւ կամ հասած են աշակերտներու լրբանալուն եւ ըմբոստանալուն :

Դպրանոցը զուրկ մնացած է իր որոշ կանոնադրութիւնը ունենալէ, որովհետեւ չէ ունեցած իր հաստատուն եկամուտները : Դպրանոցը չէ ունեցած իրենց պաշտօնին գիտակից, պարտաճանաչ ուսուցիչներ, որովհետեւ անոր ղեկավարիչները, հոգաբարձութիւնները, եղած են անձուհեաց եւ անկարող մտաւորապէս՝ այդ բարձր պաշտօնին : Ու այդ օրինակ մարդիկ հսկողի դեր առած են. որովհետեւ ուրիշներու նիւթապէս անկարելի պիտի լինէր ստանձնել գործ մը որ անձնուիրութիւն, զոհողութիւն եւ պատասխանատուութիւն :

Թիւն կը պահանջէ : Դպրանոցը արդիւնք չէ սուած, որովհետեւ ուսուցչական մարմիններու շարունակ փոփոխութիւնը խլած է կրթութեան յարատեւութիւնը : Ուսուցիչները գէշ կամ լաւ չեն կարողացած որ եւ է սկսուած գործ ամբողջացնելու, որովհետեւ իւրաքանչիւրը հազիւ ժամանակ ունեցած է կրթութեան մեթոտ մը ծրագրելու՝ ուրիշ մը իր նոր եղանակով եկած զայն քանդած է : Այս տխուր իրականութեան, որ ընդհանուր է ինչպէս Թուրքիայի Հայ Ազգ. Վարժարաններու՝ նոյնպէս Ռուսիայի Հ. Թ. Հ. Դպրանոցներու մէջ, մանրամասն ապացուցումը կը պատկերանայ Պ. Ս. Շահ-Նազարեանցի գրքոյկին կէջ :

Պ. Ս. Շահ-Նազարեանց կ'եզրակացնէ. « Իմ ջլեմագին ցանկութիւնը եւ մերձաւոր նպատակն է՝ որոշած տեսնել Յ. Հ. Թ. Հ. Դպրանոցի անորոշ « Կանոնաւորութիւն »ը եւ « Ծրագիր »ը, քանի որ դա միակ միջոցն է՝ ապահովելու Դպրանոցին՝ եւ՛ Պաշտօնեայի եւ՛ Ուսուցիչի եւ՛ Ուսանողի դերքը, եւայլն » : Ու կը փափաքի որ բոլոր Թեմական դպրանոցները որոշ եւ միակերպ կարգապահութեան մը ենթարկուին, որ միայն պիտի կարենայ զնեղ ցանոնք հաստատուն հիմի մը վրայ :

Թէ՛ ինչպէս պէտք է առաջացնել այդ որոշ կանոնաւորութիւնը, իրականացնել այդ ընդհանուր միակերպութիւնը, յարգելի բժիշկը կ'առաջարկէ, — Ուսումնասիրել բոլոր Թեմական Դպրանոցներու Ծրագիրները, զանոնք բազմապէս եւ պատրաստել միակ ծրագիր մը՝ զոր պէտք է հազորդել միւս Դպրանոցներու վարչութիւններուն եւ անոնց գնահատութեան : Բայց այս գեղեցիկ բաղձանքը մեռած տառ կը մնայ, որովհետեւ հազիւ թէ Պ. Ս. Շահ-Նազարեանց (Տեսուչ Երեւանի Հ. Թ. Հ. Դպրանոցի) գործի կը ձեռնարկէ, ազատ կ'արձակուի Կաթողիկոսական հրամանով, իր պաշտօնէն :

Որչափ ատեն որ մեր վարժարանները զերծ մնան հեղինակ ոյժի մը ազդեցութենէն, որչափ ատեն որ բարեկարգուած չի լինի անոնց պիւտճէն, միշտ գոյութիւն պիտի

ուսննան այն ամեն տխուր երեւոյթները, որոնք կը ծագին ազիտութենէ, կուսակցական նկատումներէ, ետասէր փառամտութենէ, հացի անզուսպ պայքարէ, եւայլն, եւ որոնք ազէտաբեր հեաեւանքներ պիտի ունենան մեր մատաղ սերունդին մտաւորականին եւ բարոյականին վրայ:

Այդ հեղինակ ոյժը՝ այսպէս խօսելով, գոյութիւն ունի մեր մէջ. Ռուսաստան էջմիածինէն կը բղխի այդ, իսկ թուրքիա կ. Պօլիսի Պատրիարքարանէն: Դժբաղդութիւն մ'է սակայն գիտել որ ատոնք անուանական գոյութիւն մը միայն ունեցած են, որուն էական պատճառը փնտռելու է անոնց պաշտօնէութիւններու վարչական մտութեան խեղճութեան եւ ողորմելիութեան մէջ: Էջմիածինը կարծես լոկ իրաւունք ունենար Կովկասի հայերու կրթական գործին մէջ, որոշ անձեր պաշտօնի կանչել եւ զանոնք ազատ արձակել: Կ. Պօլիսի Ուսումնական Խորհուրդը կարծես լոկ պաշտօն ունենար գաւառային ազգ. վարժարաններու կըրթական Ծրագիրներ և ուղարկել ու իր պարտքի կատարումին զերազոյն գոհունակութեամբը սիրտուիլ:

Թժիշկ Ս. Շահ-նազարեանցի գրքոյկը ամէն բանէ առաջ կ'անձնաւորէ հեղինակին բարի կամեցողութիւնը, որով բարեկարգուած կ'ուղէ անտեղ ամբողջ դպրոցական գրութիւն մը: Բայց կը փութանք ըսել որ որոշ կանոնագրութիւն մը, որչափ ալ լաւ կերպով շինուած լինի, դպրոցական ընդհանուր օրէնքներ որչափ ալ պեղեցիկ յոյսեր ներշնչեն, միշտ խաղալիք գտնալու վառագին պիտի ենթարկուին՝ որչափ ատեն որ մեր կրթական գործին մէջ տիրող սանձարձակութեան վախճան մը չգրուի:

Մեր կարծիքով, լաւագոյն միջոցը կը լինէր, կանոնգրութեան ու Ծրագիրի պատրաստութենէ առաջ, ոգի ի բռնի ճգնիլ, մեր կրթական գործին մէջ, հեղինակ մարմիններ կազմել, որոնք իրենց ձեռքին մէջ ունենան մեր վարժարաններու ղեկը, եւ անոնց մատակարարութեան, կրթական Ծրագիրի լաւապէս գործադրութեան հսկելու իրաւունքները: Փանի որ Սինօզը անկարող է ուղղակի յանձն տանել այդ պաշտօնը, կարող է կազմել անաչառ ըն-

տրութեամբ մը, Թեմական Գարանոցներու միաձայն հաւանութեամբը եւ կարող անձնաւորութիւններէ բաղկացած յանձնախումբ մը, որ զբաղի կրթական գործով: Այդ վայրկեանէն կրթական ընդհանուր ծրագիր մը կարելի է խիստ զիւրութեամբ պատրաստել, որուն գործադրութիւնը կըրնայ պարտաւորիչ դառնալ ամեն վարժարան-դպրանոցի մէջ: Տեղական Հոգաբարձութիւնները եւ Տեսուչները իրենց կարգին պարտաւոր են տարին գոնէ մէկ անգամ, հաշիւ տալ ընդհանուր Հեղինակ Յանձնախումբին իբր քննիչ զրկած Այցելու Տեսուչին, վարժարաններու պիւտճէին եւ կրթական վիճակին վրայ: Այդ մարմինը միայն իրաւունք պիտի ունենայ ուսուցիչներու մէջ փոփոխութիւններ մտցնելու, մանրագնին քննութենէ մը վերջ: Այդ մարմինը միայն իրաւունք պիտի ունենայ տեսուչները պաշտօնէ արձակելու, երբ սա իրաւացի պատճառներով, իր ապիկարութեամբ, կուսակցամոլ կամ շահախնդիր ուղղութեամբ, եւն. անյարմար դատուի իր պաշտօնին:

Միեւնոյն ուղղութեան կրնայ հետեւիլ Գ. Պօլիսի Ուսումնական Խորհուրդը, որ ինչպէս քաղաքին նոյնպէս Գաւառային վարժարաններու վրայ հսկելու վերին իշխանութիւն ունի:

Կաթողիկոսի եւ Պատրիարքի միակ գործը կը լինի, այն ատեն, այդ Հեղինակ Մարմիններու կազմակերպութեամբ զբաղել, ջանագիր լինելով որ անոնց մէջ մուտք չգործեն ընդհանուրի բաղձանքին անհամապատասխան տարրեր:

Երբ վարժարանները այսպէս գեղեցիկ կերպով ընդհանուր ուղղութեան մը մէջ բնակն, անոնց պահանջներու, ելքի ու մուտքի համաձայն ամեն ինչ կանոնաւորուի. այն ատեն միայն կրնանք յուսալ անոնց շատ թէ քիչ օգտակարութիւններ ընծայելուն:

Անհատական գեղեցիկ բաղձանքները ընդհանուր չարիքին չեն կարող գիմադրիլ: Արմատական փոփոխութիւն մը հարկաւոր է մեր կրթական ողորմելի կայութիւնը դարմանելու համար, ու այդ բանը մասնաւոր անձնաւորութենէ պէտք չէ յուսալ, այլ հաւաքական ոյժերու միասին ձուլուելէն:

Մ. Պ.

Le Gérant: CHARLES BEAULIEUX

Imprimerie « Hamalsaran » 4, rue Ortolan. 4 — PARIS

Հ Ա Մ Ա Ն Ս Ա Ր Ա Ն

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ:
Իւրաքանչիւր թիւը պիտի ունենայ, անուազն, 48 էջ:
Բաժնեգինը ԿԱՇԽԻԿ Է.

	Տարեկան Վեցանետայ
Ֆրանսա	10 ֆր. 5 ֆր.
Օտար երկիրներ	12 » 6 »
Թուրքիա	(ողջ) 50 ղրշ. 25 ղրշ.
Ռուսիա	5 ռուպլի 2 ռ. 50 կ.
Ամերիկա	2 ամերիկ. 1 ա. 20 ս.

ԻՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«ՀԱՄԱՆՍԱՐԱՆ»Ի ԳՐԴԱՐԱՆԻ ԼՆԵՐԳ

- Ախալցխա . — Արթ: Տէր. Ն. Գեղ. Համբարձումիանց
- Ավերիան (Թբոյ) . — Ա. Գ. Քարոսեան
- » (Կին) . — Կարապետ Առեկանեան
- Բաղրեզ . — Տ. Գ. Փաշաեան
- Եգիպտոս (Աղեքսանդրիա) . — Միհրան Չրազեան
- Երզնկա . — Կ. Նարնջեան
- Թոխար . — Յ. Սիւզմէճեան
- Տրսպիզոն . — Գ. Միմանեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Վեճեցի. Բազմալէզի Խմբագրութիւն. — Բազմալէզը չենք ստացած: Կոչ պիտի մնայինք՝ եթէ բարենաճէ իք յանձնել անգիտակցաբար պատ. Խմբագրութեանը ուղղուած մեր 1899, ներդրումներ Էն-Նամակը, Միաբանութեան Տպարանի Վարչութեան: Այդ նախնակի սրտասխտներն կը սպասենք անհամբեր:

Ս. Արաբիա. Բաղրեզ. — Յարսիսէն սկսած «Շաւիղ» չենք ստանար:

Թիֆլիս. «Նոր Դար»: Մ. Բերբերեան. — Ձեր բարանքները քրտակալանի մը վերջին շրջագրութիւնները լինելէ հանկեցած ենք: «Մոյ Պետ»ի ֆրանս. նշանաւոր Հանգլէտին, «Ռեզիստան Ռեզիստ»ի մէջ գրած յօդուածը որ եւ է առընչութիւն չունի ձեր ակնարկած հարցին հետ: Դարձեալ, եթէ կը կասկած իք «Մոյ Պետ»ին հայ լինելուն վրայ, ձեզի խորհուրդ կուտայինք անդամ մ'ալ ակնոցնիկ սրբալու աչքէ պնդել Ռեզիստ սե Ռեզիստ, ուր խոչոր ստանբով գրուած է. «au des publicistes distingués d'Arménie» բառերը. հակառակ պարագային խիստ ոգորմելի գաղափար մը պիտի տաք ձեր ֆրանսեան լեզուի մէջ ունեցած հմտութեան վրայ:

Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

Տ Պ Ա Ր Ա Ն

Փ Ա Ր Ի Չ

Կը տպագրուին հայերէն, ֆրանսերէն եւ ուրիշ օտար լեզուներով ամէն տեսակ աշխատութիւններ:

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ.

Մանուցագիր, Շրջաբերական, Արտէթուղթ, Փոխգիր, Առեւտրական զանազան տոմսեր, Տոմսեր, եւն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Գիրքեր, Գրքոյկներ, Կանոնադրութիւններ եւ Մրագիրներ: Լրագիրներ եւ Հանդէսներ: Համալսարանական Թեզեր, եւն:

ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԻ ՊԵՏԿԵՐ.

Այցաքարա, Նամակազուխ, Հարսնիքի եւ Մուսնի նամակներ, Հրաւիրագիր, Մահազդ, եւն:

Պատկերազարդ եւ գունաւոր աշխատութիւններու մէջ, ճաշակ եւ նրբութիւն:

ՄԱԿՈՒՐ ԵՒ ԽՆԱՄՈՒԱԾ ՅՊԱՅՐՈՒԹԻՒՆ

ԽԻՍՏ ՉԱՓԱԻՐ ԳԻՆՆԵՐ

Օտար երկիրներէ եղած յսկանարարութիւնները կսկսիկ եւ եւ կը կատարուին փութով եւ ճշտութեամբ:

IMPRIMERIE HAMALSARAN

4, RUE ORTOLAN, 4

PARIS

— ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ .

1. Փարիզի Արուեստահանդեսը, (12 դեղեցիկ տեսարաններով .) Գինը 1 ֆրանք:

2. Բնակիւն եւ Բնապատկան Գիտարիւններու Ուսուցումը Նախնայիւն Վարժարաններու մէջ. Գինը 40 սանդիւֆ Գինը ուզողները թող դիմեն կնքագրութեանս: